



## ՀՈԲԵԼՑԱՆԱԿՈՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ

Հոկտեմբերի 12-ին, կիրակի օր, երեկոյան ժամը 6-ին, Երևանի «Հայաստան» հյուրանոցի շքեղ ճաշասրահում, Գերագույն Հոգևոր հոռհովորդը և Հորելյանական կենտրոնական հանձնաժողովը, ի պատիվ Վեհափառ Հայրապետին, կազմակերպել էին Հորելյանական ընդունելություն, որին հրավիրվել էին ավելի քան 250 հոգի, Վեհափառ Հայրապետի ծննդյան հիմնայիշակի և գահակալության երրորդ տարեդարձի հորելյանական հանդիսություններին մասնակցող արտասահմանյան հոգևորական և աշխարհական բոլոր պատգամավորները, հյուրերը, ուստափորները, ինչպես նաև արվեստի, գրականության, մամուկի ներկայացուցիչներ և թղթակիցներ:

Հրավիրյանների թվումն էին նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առջնթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը և Խորհրդի անդամներն ու այլ պաշտոնական անձնավորություններ:

Հորելյանական սեղանը օրհնեց Վեհափառ Հայրապետը:

Հայրենի երկրի բազմազան բարիքներով զարդարված սեղանների շուրջ ստեղծվել էր Հայկական շերմ ու սրտագին մթնոլորտ: Հորելյանական սեղանը ղեկավարում էր Եղիպտոսի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Ս. Մամրես արքեպիսկոպոս Սիրոմյանը:

Առաջինը խոսք առավ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առջնթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը և ասաց.

«Այս հանդիսավոր սեղանը տրված է նորին Վեհափառույթուն Վազգեն Ա-ի պատվին:

Թույլ տվեք, Վեհափառ, մի անգամ ևս շերմորեն շնորհավորել Ձեզ: Ցանկանում եմ Ձեզ բաշառողջորյուն և Ձեր հետագա գործունեության ընթացքում Ձեր գործերին լիալատար հաջողություն:

Այսօր կըմիածի Մայր Տաճարում և ապա Վեհարանի Մաղկյա դահինում շատ հետաքրքիր ելույրներ եղան: Ես չեմ սխալվի ասելով այն, որ այդ ելույրների նիմեական թեման, նիմեական բովանդակությունը հայրենասիրույնն էր:

Այս սեղանը մեզ շատ բան է ասում երակածի տեսակետից: Այս սեղանի շուրջը հստած են աշխարհի բոլոր Մայր Յամաքներից եկած մեր սիյուտքանայ ժողովրդի ներկայացուցիչները: Այս սեղանը արդեն շատ բան է ասում հայ ժողովրդի նակատագրի մասին, ժողովուրդ, որ ցրված է ամբողջ աշխարհով մեկ: Եվ անա այսօր Սիյուտքի հայ ժողովրդի ներկայացուցիչները եկել են մեր հայ պետականության կենտրոնը, եկել են Մայր Հայրենիք: Ես ուզում եմ այսօր, երբ հստել ենք այս հանդիսավոր սեղանի շուրջ, մեր խոր գնունեակությունը արտահայտել մեր սիյուտքանայ ժողովրդին, որը ննջող մեծամասնությամբ գործում է մեր Հայրենիքի կողքին, ուրախանում է երա հաջողություններով: Եվ եթե առանձին դեպքեր լինում են, երբ երա հակառակորդները փորձում են վեանել երան, երանք կանգնում են Սովետական Հայաստանի կողքին: Մենք

կցանկանանք, որ այդ հայրենասիրուրյան-նը, այդ կապը մեր Մայր Հայրենիկի նետավելի հզորանա: Մենք՝ Հայրենի բնաշխարհի մարդիկս, կանենք ամեն ինչ որ մեզնից կախված է, որպեսզի այդ կապերը ընդլայնվեն, որպեսզի դրանք էլ ամելի սերտանան:

Մի ցանկուրյուն և և և և կավարտեմ: Ցանկանանք, որ մեր բոլորի հայրենասիրուրյունը կոնկրետ լինի, որովհետև իսկական հայրենասիրուրյունը միշտ կոնկրետ է և ոչ թե վերացական: Բավական չէ հիմանալ մեր Հայրենիկի նիմ ու նոր կառուցեներով, հայրենասիրուրյունը միայն պանդիայի բեմա չէ, և ամայն ժնարերգուրյան բեմա չէ: Հայրենասեր այն անձը, այն հաղաքացին, Հայրենիկում թե նրա սահմաններից դուրս, եթե նա իսկական հայրենասեր է, ապա նա անպայման պետք է մի քար ավելացնի Հայրենիի երշանկուրյան և բարօրուրյան շենքի վրա: Ուտեմն Հայրենիկը միայն հիացմունքի առարկա չէ, Հայրենիկը դժվարուրյուններով, պայտարով և շինելով պետք է սիրել: Նա է իսկական հայրենասերը, ով իր քրտինքը բերում է ի մասնակցուրյան այդ շինուրյան: Այդ մասնակցուրյունը կարող է լինել գրականուրյան մեջ, կարող է լինել երաժշտուրյան մեջ, կարող է լինել մշակուրյի մեջ և այլ բնագավառներում: Բայց նա միշտ մեռում է որպես լուսա, որպես հայրենաշինական աշխատանք:

Թույլ տվիք այս բաժակը բարձրացնել կենացը Ամենայն Հայոց Կարողիկոսի, նրա հայրենասիրական գործունեուրյան համար, և ցանկանալ, որպեսզի մենք բոլորս՝ դրսի և ներսի աշխարհի հայերս, մեր կյանքի բնարանը ունենանք հայրենասիրուրյունը, հայրենասիրուրյունը:

Ապա խոսք առավ Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի բարեխնամ առաջնորդ գերազնորհ Տ. Մամբրէ արքեպիսկոպոս Գալֆայանը և ողջունելով Վեհափառ Հայրապետին հանուն ամերիկահայության, ասաց.

«Միրը ողջո՞յն Ազգին Վեհափառ Հայրապետին:

Ողջուններ եմ բերեր նաև Ամերիկայի մեր թեմի հավատացյալ ժողովուրդեն:

Եկեր ենք մոտիկ և հեռավոր տատաններե, այսպես համախմբվելու ֆեր շուրջը, Ս. Էջմիածնի շուրջը, Մայր Հողին վրա, դիմացը մեր պատմության կերտումի վկաներում՝ Արարատին և Արագածին, քաղցր ցնծերդով փառավորելու Հայաստանյաց Առաքելական Ս. Եկեղեցվո աղքանտիր Հայրապետիդ գահակալությունը, երրորդ տարեղարձին առթիվ:

Այսպես մեկտեղվելով կամարներում ներքեր մեր պատմական Տաճարին և այստեղ միասնարար մեզի հետ ոմանալով ամբողջ զգայությունը ազգին բոլոր խավերուն, չերպապես կողումենք ծննդյան հիսնամյակին հասած Ամենայն Հայոց Կաթողիկոս Վագգեն Ա. Հայրապետը, և մեր սրտեն, մեր հոգին արձակված մաղթանքներով կրարբառինք, ո՞ող պայծառ ու շեն մնա Սրբազնագույն Գահը Հայրապետական, թող անսասան մնա Հայաստանեաց Ս. Եկեղեցին, թող Կրկա՞ր, քաջառողջ կյանք ոմանա մեր բոլորին շատ սիրելի Նորին Ս. Օծությունը:

Ունինք օգտակար այն բարի օրինակները, զորս առատությամբ բաշխած է և կշարունակե բաշխել Ազգիս Վեհափառ Հայրապետը: Անոր իմաստում քայլերուն, Անոր շերմշոմշին դառնալու, հաղորդվելու մեր առաջին փորձին մեջն անգամ պիտի ոգորչվինք, այն քանի շատ, որ խանդավառությամբ, նոր ավլունով պիտի կարողանանք կառչիլ, փարի բարձր նպատակին—Եկեղեցին, ինչպես եղած է անցյալին, ընել խարիսխը մեր միության աշխարհի մեջ:

Իրավ է, որ բախտին կարգադրությամբ սա վեցերորդ անգամն է, որ օտարության մեջ թափառելեն հոգնած քայլերս զիս բերած են Ս. Էջմիածնին և Հայրենիք, բայց կզգամ, թե ուրախութենք կհորդի սիրտս, երբ հայացքս պտույտ կընե կատարված համայնական շինություններուն և նորոգումներուն վրա, երբ կդիտեմ հիսնամյա, բայց առույգ ու կորովի Հայրապետը, երբ Անոր մտտն ու շուրջը կտեսնեմ կանգնիլը նրիտասարդ վարդապետուններուն և այն պատանիներուն, որոնք պիտի ըլլան վաղվան սպասավորները մեր Եկեղեցվույն ու ժողովուրդին:

Հրաշք է կատարվեր անցնող երեք տարվան մեջ ինչպես Հայրենի երկրի ամեն մեկ անկյունը, այնպես և հոս: Մայր Աթոռին սա իրականությունը անշուշտ կաթնելի եղած է ընծայված պատեհություններուն շնորհիվ:

Ինել խմբագրատումը «Էջմիածն» ամսաթիրին կամ անցնիլ դասարանները Հովհոր Շեմարանին՝ կնշանակե ունենալ հոգեկան լայն բավարարություն: Կարգապահությունը կուռա վեհություն մը վանական կյանքին, որում համար բերած է ու կշարումակի բերել Վեհափառ Հայրապետը իր աստվածատուր շնորհները:

Անդին ահա պատրաստ եղած է տպագրատումը, ուր հետզհետե պիտի գան տեղ գրավել կազմածները տպագրական մեքենաներուն, որոնք պիտի բանին լուսին բերելու ու միայն «Էջմիածն» ամսագիրը, դասագրերը, Ավետարանի տպագրված օրինակները,

ապա նաև ոմենան պիտի մեծ դեր մը լուսավորության մարզին մեջ, Այս տպարանը, որ երեք տարի առաջ, Վեհափառի գահակալության առթիվ խոստացված է Ամերիկայի հայոց թեմի անունով, այսօր արդիական լրիվ սարքովը ուրախություն կպատճառե նախ նորին Ս. Օծության և պատասխանացնողին՝ Ամերիկայի մեր հավատացյալներուն, և գործին ղեկավար անձին՝ մեր թեմական խորհուրդի առենապետ երվանդ Աղանձանյանին:

Ս. Էջմիածնի սրբազն Սեղանին առջև աղոթքի պահում մանավանդ կհայցեի Աս-

վրա մեր ժողովուրդը պետական իր կյանքով կատարե ամեն տեսակ նվաճումներ և օր ժան այ կարենա ստեղծել պատեհություն՝ Սփյուռքի չորս ծագերուն ցրված իր եղբայրներն ու քոյրերը դարձյալ կանչե տուն՝ միամնաբար նստելու այն մեծ սեղանին, որ լեցված ախտի ըլլա բարիքներուվը ամենքին վաստակով: Այդպիսով, հայ հոգիներն ճառագայթած լուսով պիտի ողողվի աշխարհն Հայաստան, ինչպես որ կրաղձար շարականագիր մեկ Հայրապետը մերս:

Վեհափառ Հայրապետի հորելյանը սրտագին ու եղբայրական ճառերով շնորհավորի-



ՎԵՀԱՓԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՅՈՒՐԵՐԻ ՀԵՏ ՄԱՅՐ ՏԱԶԱՐԻ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ, ՄՐԱՎՈՒԹՅԱՆ ՄԵՌՈՒԴԻ  
ԿԱԹՍԱՅԻ ՄՈՏ

տուժմե պարգևել Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետին արեշտություն, քաշառող-ջողովուն և գործոց հաջողություն, որպեսզի ամեն անգամուն այսպես ուխտի գալով հոգեպես մխիթարյան մեր հավատացյալները:

Իր ծննդյան հիսնամյակին առթիվ իմ խոնարհ մաղթանքս է, որ նորին Ս. Օծությունը ըլլա միշտ շրջապատված բացում միաբաններով, ուանողներով, համայն հայ ժողովուրդով, որպեսզի ամեն տարեդարձի, սիրտերը հայ հոգիներուն լեցվին ցնծությամբ՝ ի տես անսասան Հայաստան-յայց Առաքելական Ս. Եկեղեցւու:

Կմաղթեմ մանավանդ, որ Հայրենի հողին

յին նաև քույր ժողովուրդերի ներկայացուցիչներ՝ Վրաց եկեղեցու և ժողովրդի ներկայացուցիչ գերապատիվ Տ. Լիոնիդ Եպիսկոպոսը և Անդրկովկասի մուսուլմանների Կրոնական վարչության ներկայացուցիչ Ռուս էլ-Արասին:

Արևմտյան եկրոպայի թեմի Հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի առաջնորդ գերաշնորհ Տ. Սերովը Եպիսկոպոս Մանուկյանն իր ելույթում ասաց.

«Երկրորդ անգամ է, որ կայցեկմ Մայր Հայրենիք և Ս. Էջմիածին, շատ կարճ ընդմիջումով, ընդամենը երեք տարի միայն: Մակայն կտեսնեմ իրական հառաջդիմու-

թյուն բոլոր մարզերու մեջ և մանավանդ շինարարական ասպարեզի մեջ; Երևանը կարծես ամրողությամբ շինարարական փայտամածներու մեջ առնված է; Նույն հառաջդիմությունը նաև մտավորական գետնի վրա: Դպրոցական, համալսարանական սերունդը հրճվանքով միայն կարող է լից-նել հայրենասեր հայու սիրտը:

Մեր Հայրենիքի մեջ աշխատող, ստեղծագործող պատվական մեր քույրերն ու եղբայրները հաջողությամբ կվերակառուցեն մեր անցյալը, անողությունը մեր օրերու բովանդակությունը: Մեր ճարտարապետությունը, մեր երաժշտությունը, մեր գեղարվեստը, մեր անցյալ փառքի բոլոր նշինարները համարվին, կմիաձառվվին այսօրվան կենսունակ նորածին: Սովետական Հայաստանի ստեղծագործական բուռն թափին մեջ, անոր մերօրյա դիմագծությունը հագնելով, անոր բացառիկ կերպով հայեցի դորշմը կրիսի մեր մեն-մի շարականեն, մեր մեն-մի պատմիչեն, «արտօթք դարձած» մեր մեն-մի երկաթագիր գրչագրերեն, մագաղաթներեն, քարերեն, մեզ նայող կիսավեր վանքի մը կամ բերդի մը հպարտ պատերեն: Այսօրվան աեղեցիկ երևանը նոր թարմություն, կենդանի ամիշէ է դրած այդ բոլորին մեջ ու քով-քովի շարում՝ ներևանյան մայրուղիներու եղերքին բարձրացող շնչները, իրուն կրթության վառարան, իրուն արտադրության կեդրոն, իրուն հասարակական, ոպւրարկության սահմանված շինություն:

Եթե լավ սերտենք մեր պատմությունը, այդունի մեր աշքին համադիմակի շատ հատկանշական երևույթ մը: Այդ եկեղեցիի և Պետության համերաշխ գործունեությունն է, որ կարմիր լսոր պես կծփի հայ պիտականության ամբողջ տևողության ընթացքին: Պետություն և եկեղեցի քալած են ձեռք-ձեռքի տված, սիրու-սրտի միաձուլված, իրենց և՛ ուրախության և՛ տառապանքի օրերուն, գործած են միսամին ու պահպանած են մեր Ազգի գոյությունը: Այդ իսկ պատճառով, երբ հայ պետականությունը անցյալի մեջ կկործանի, հայերու համար, նույնիսկ տիրող ալլագրուներու աշքին, Հայ եկեղեցին կկատարեր պետականության դեր հայ ժողովուրին համար: Անցյալին մեջ իր եկեղեցին հրաժարարող կնկատվեր նաև ազգին հրաժարող:

Երբ մենք կտոնենք նորին Ս. Օծություն Վազգեն Ա ազգընտիր Հայրապետի ծննդյան հիմնամյակը և գահակալության երրորդ տարեդարձը, սրտագին փափագ մը, զերմ

մաղթանք մը շարունակ կբախի իմ մտքի և սրտի դները: Այդ մնայն միտքը այն է, որ միշտ շարունակ եկեղեցիի և Պետության ավանդական և արդյունավետ հարաբերությունը, այսինքն անխորտակ և ամուր հիմքու վրա դրվին Պետության և եկեղեցիի փոխհարաբերությունն ու գործակցությունը: Մերը առանց մյուսին մեկ ձեռքով ծափ տվողի դիրքին մեջ կըլլա: Ուրեմն բոլորս աշխատինք, որ եկեղեցին և Պետությունը այժմ և ապագային մեջ և գործեն նույն ոգիով: Այն ժամանակ անոնց այդ սերտ գործակցովենեն հրաշալի արդյունքներ կրացվեն հայ մշակութի, ճարտարապետության, գիտության համար: Հայ ժողովորդը կըլլա երշանիկ ու բարեկեցիկ: Համոզվելու համար այս բանին, Դուք բարի եղեք հետաղարձ ակնարկ մը նետել մեր անցյալին վրա և այնտեղեն հավաքել մեր եկեղեցիի, անոր ստեղծած վանական սիստեմի նվաճումները:

Միակ եղրակացություն մը դուքս կուգա այս բոլորին: Այդ ալ ան է, ինչ որ ունինք մենք որպես հոգեկան կամ նյութական արժեք. կյանքի որևէ բնագավառի իր նվաճում, բոլորն ալ պարտական ենք մեր վանքերուն ու եկեղեցականներուն: Եվ այդ ոչ միայն հեռավոր անցյալին մեջ: Մինչև համաշխարհային առաջին պատերազմը այդ այդպես էր, հայության երկու մայր թևերուն համար ալ, Արևելյան թե Արևմտյան Հայաստանի մեջ: Այդ այդպես է որոշ շափով նաև այսօր Սփյուտի մեջ: Եվ եթե օտարացման առջև հզոր պատվար մը կա, ան ալ Հայ եկեղեցին է, որուն շուրջն ու մեջը կամփուին հայ լիզուն, մշակութի, միտքը, անցյալն ու ներկան:

Հիմա ալ եկեղեցին կրնա և պիտք է շարունակ տանիլ իր պատմական դերը:

Ապա խոսք առավ Հյուահսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի թեմական խորհրդի ատենապետ և Ս. Էջմիածնի տպարանի հանգանակության հանձնախմբի նախագահ պր. Երվանդ Աղանանյանը, որը կարդաց հետևյալ ուղղերձ:

«Եկեղեցիան Հայրապետ, Հոգևոր հայրեր, սիրեկի՞ քույրեր և եղբայրներ:


Հանուն Ամերիկայի թեմի հայ հավատացյալ ժողովուրիդին, կուգամ հայտնելու մեր որդիական ակնածանքն ու աերը նորին Ս. Օծության ծննդյան հիմնամյակի և գահակալության երրորդ տարեդարձի առթիվ: Ամենուրի ուր հայ մարդը կապրի, որուն հոգին և սիրու տակավին անաղարտ մնացած է և մոռցած չէ մեր հայրերուն ովստը, ան այսօր

կաղոթիք առ Աստված՝ Նորին Վեհափառության կյանքի արևշատության, առողջության համար և կհայցե պայծառություն Մայր Աթոռին, որուն Գահակալն է, ի շարս մեր արժանավոր և հավատավոր հայրապետներուն՝ Վաղգեն Ա-ը:

Հայ ժողովուրդի մեկ մասը քանի պանդոխտության դատապարտված է, կապրի Հայրենիքի կարուտով, սրտին մեջ հուզուի լուս մը, որ կուգա հայուն գոյության խարիսխ և խորհրդանշան Ս. Էջմիածնեն, որ կանգնած է այսօր ալ Արարատի կողքին, խրոխու ու վեհապանած:

Եի՞ն և մեր հայրերուն սուրբ հավատքին, մեր ազգային գիտակցության վրա խարսխը ված:

Այո՛, խորապես համոզված ենք ազգովին, որ իզուր չեր մեր հայրերուն դարերու զոհաբերությունը դեպի Ս. Էջմիածինը: Հայաստանյայց Եկեղեցին և Հայ Ազգը պիտի ապրին: Միայն հոգիով կուրերը չեն տեսներ մեր հայ եղբայրներուն և քուրերուն Հսկայական նվաճումները հայուն սուրբ հոգին վրա կատարված, ինչ որ մենք տեսանք մեր կենդանի աշքերով: Հայուն երկիրը, որ անցյալին բզկտված և տոնակոխ եղած էր.



ՎԵՀԱՓՈՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ ՄԻ ԽՈՒՄԲ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ

### ՎԵՀԱՓՈՌ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹ

Այսօր այդ լուսը Դուք առավել ևս վառեցիք մեր հոգիներուն մեջ Զեր հայրական հորդորներով, որոնք հիմնված են հոգեկան և բարոյական բարձր սկզբունքներու վրա: Այդ շինարար գործունեությամբ, ըլլա ան վարշական-վաճական, հոգեոր կամ մշակութային, Դուք նոր կյանք տված եք Մայր Աթոռին: Այսպիսով, Դուք մեզի բերիք նոր հույս, հավատք և ապրելու կամք, հայ ժողովությամբ և հայ զգացումով: Որով, Զերդ Ս. Օծության ծննդյան հիսնամյակը և գահակալության երրորդ տարեկարձը հոմանիշ է Հոգառորդ-իմացական վերաշինության և վեհականդանության, Հայաստանյայց Եկեղե-

յասօր ոչ միայն բուրաստանի մը վերածված է, այլ նաև հայ ազգային մշակույթի, գիտության, արվեստի վառ օջախ մը դարձած է մեր հայրենի եղբայրներու սուրբ աշխատանքով:

Հայ հոգմուրականը, Հայաստանյայց Ս. Եկեղեցիին միջոցով, դարերով հայ ժողովուրդի առաջնորդը եղած է: Այդ հոգեբանությունը, որ մեր պապերեն ժառանգ ինկած է մեզի, կստիպե մեզ իբրև տիպար հայ մարդ ապրելու, սիրելու մեր Մայրենի Եկեղեցին, համախմբվելու անոր սուրբ հովանիին տակ, որովհետև Հայ Եկեղեցին տվավ հայուն Ա. Բ. Գ-ը՝ ազգապահպանման ամենակարևոր ազդակը: Հայ Եկեղեցին օրհնեց ազատագրու-

թյան խորհրդանշան քաջն Վարդանի սուրբ։ Մեր ճարտարապետությունը, նկարչությունը և երաժշտությունը ստեղծվեցան, զարգացան և պահպեցան վանքերու մեջ, մեր Եկեղեցին հովանիին ներքեւ, մեր արժանավոր վարդապետներու ձեռքով։ Արովյան, այս մեծ հայրենասերը, երբ ըսավ, թե ոՄեկ ազգի պահողը, իրար միացնողը լեզուն առ հավատը, ան չէր խոսեր միայն մեկ անհատի կողմե, այլ կարտահայտվեր ամբողջ ազգի մը համոզումով, Գիմնված անցյալը փորձառության վրա։

Այսօր հայ մեծ զանգված մը, ցրված աշխարհի ամեն անկյունները, Հայրենիքն դուրս, դատապարտված է կորուստի, ազգային տեսակետով։ Այս հայ զանգվածը այս Սուրբ Հողին հարազատ զավակն է, թեև կապրի որպես տարբեր երկիրներու քաղաքցի, կապված մեր նվիրական Հայրենի այս Հողին և Ս. Էջմիածնին։ Որով, այսօր Հայաստանյաց Եկեղեցին նորեն ինքոջինքը կգտնե մեծ և լուրջ պատասխանատվությունը մը առցեւ, այն է ըլլալ օդակ մը, ամենուրեք ցրված պանդուստ հայ մարդուն և այս Սուրբ Հողին միջև, որ ներկված է մեր պապերուն արդար և անմեղ արյունով։ Ճշմարիտ հայու արյուն կրող ամեն մի անհատի պարտքն է զորացնել մեր հավատքը, գերեցկացնել մեր լեզուն, պահել մեր գորականությունը, քանզի դարերու փորձառութենեն մենք սորված ենք, թե միայն այս է միջոցը իրեւ հայ կարենալ ապրելու կ մեր ազգային գոյությունը շարունակերու համար։ Ես վստահ եմ, որ մեր եղբայրներն ու քույրերը, որոնք բախտն ունին ապրելու մեր Հայրենի Հողին վրա և վայելելու անոր պայծառ ու շերմ արկը, խմելու անոր հստակ ու քաղցր ջուրը, ծծելու անոր մաքոր և առողջ օդը, այս գիտակցությամբ է, որ Հայրենիքի վերաշնորհյան սուրբ գործին նվիրված են և իրենց աշխատանքով կնվաճեն նոր հորիզոններ և կկերտեն հայ ժողովորդին նկարագիրը քաղաքակրթության ճամբուն վրա։

Մենք ազգովին երախտապարտ ենք անոնց։ Անոնց եղբայրական անունները փորագրված են մեր սրտերուն վրա և անշնչելուրեն պիտի ապրին մեզ հետ։

Ֆրանսացի մեծ բանաստեղծ մը ըսած է, թե այն անհատը, որ իր Հայրենիքին հանուան, ան մեռած կըլլա իր Հայրենիքին համար։ Մենք, որպես ժողովուրդ, բացառություն չենք կազմեր այս օրենքին և Հայրենիքին դուրս ստույգ կորատյան կրատապարտվինք, եթե մեր սրտերուն մեջ ըլլա Հայրենիքի սերը և Ս. Էջմիածնի շղթառնող պատկերը։ Աշխարհի ամեն ծայր ցիրուցան եղած համայն հայության աշքերը Զեր վրա դարձած ին,

Դուք եք մեր հովար, մեր լույսը, մեր ճանապարհը, միլիոնավոր հայ նահատակներու արյունով և կտակով։ Անոնք երեկ զոհաբեր վեցան, որպեսզի այսօր հայը ապրի։

Մենք՝ պանդուստ հայերս, ունինք մեկ երազ և մեկ իդա միայն։ Եթե մեր ուկորները պիտի թաղվին օտար երկինքներու տակ, գոնե Դուք, երդվալ պահպանները մեր երկրին, ընդունեցեք մեր ոգիները։ որ գան և ապրին մեր հայրերուն և Զեր ոգիներուն մոտ, հայուն երկինքին տակ, հայուն Սուրբ Հողին վրա»։

Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի թեմի Հայրապետական պատվիրակ և առաջնորդ գերաշնորհ Տ. Ասողիկի եպիսկոպոս Ղազարյանը, հանում իր թեմի խոսք առնելով պաշտոնական ընդունելության ժամանակ, ասաց։

«Հեռավոր Արևելքի, ի մասնավորի Հընդկաստանի հայությամբ, որ դարեր շարունակ սերտորեն կապված է եղեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և անոր լուսավորչաշառավիղ հայրապետներուն, այսօր և այս բարեպատեհ առջիկ չէր կարող մնալ անտարբեր իրեն ուղղված հրավերի կոչին։

Մենք բոլորս, պատգամավորներ թե ուկտավորներ, պահ մը եկած ենք բոլորվելու Զերդ Վեհափառության և Լուսավորչի հնադարյան ու պատկառելի Գահին շուրջը, ցուց տալու, որ մեր բոլորին սրտերը կրաբախն համբաւենական այս տաճարին և անոր Գահակալին համար, հանձին Զերդ Վեհափառության։ Եկած ենք ծովակի գալու հեման Սեղանին առաջ, մենք ալ մեր ճակատները խոնարհեցներու, համբուրելու այս սրբատաշ ու լուսասփյուս Սեղանին մարմարյա քարերը, հաղորդվելով մեր այն բարեպաշտ նախնիքներու հետ, որոնք դարուց ի դարս քարավան առ քարավան եկան երկուուղությամբ և գիւտակ այս կամարներուն տակ խնկարուց ու պանծալի, իրենց մտքին ու հոգիին տուրքը տվին, ու ասկե յեցուցին փոխադարձաբար իրենց սրտին կանթեղը և ամանը հոգիին, Ս. Լուսավորչի լույս հավատքին յուղով։

Օքրու օրն է մեր բոլորին համար նվիրական ու պատմական այս օրը, և կիզուր չէ, որ մենք, ծովեր ու ցամաքներ կտրած, Մայր Հայրենիք և Մայր Աթոռ եկած ենք ուկտավորին պատգամավորներուն հետ։


Զերդ Վեհափառության հովանիին ու շուրջին տակ, մենք ականատես վկաները կըլլանք, նոր շոմչով ու նոր եռանդով սկսած եկեղեցական-հոգևոր վերածնունդի նոր դարաշրջանի մը Մայր Աթոռն ներս, որ անհուն ուրախությամբ մը կըցնե մեր բոլորին սրտերը։

Մենք ուրախ ենք, որ Մայր Հայրենիքի սահմաններեն ներս, մեր Եկեղեցին ու մեր ժողովուրդը խաղաղ ու շինարար կյանքի փարած, կերտեն իրենց լուսավոր ապահուած: Նույնը չէ սակայն մեր ազգային ու կրոնական կյանքը Հայրենիքեն դուրս: Փոթորիկներ մերթ կալեկոծեն արտաշիարհի ճարության կյանքը և մեր Եկեղեցին: Մեր Եկեղեցին նավը հաճախ ամենի փոթորիկներու վրա կնավի, բայց մենք հուահատ չենք, մենք կլսենք Գերագույն նավապետին ձայնը, որ կըսի՝ «Մի՛ երկնշիք»: Այդ ձայնին արձագանքը երկրի վրա և անոր ներկայացուցիչը խորհրդավորապես Զերդ Վեհափառությունն է,

ծնեն, անոր կնայինք և անկե կսպասենք մեր փրկությունը, որ իրեն Աստուծո Աջը համատրած կհովանավորի մեզ բոլորս: Վեհափառ Տեր.

Հետո կրերեմ շնորհակալություններ հազարավոր սրտեր բասած, այսօրվան բարեպատեհ տոնին առթիվ, հետո Զեր Գահուն, մաղթելով երկար և երջանիկ ուրիշներ Զերդ Վեհափառության:

Թող Տերը անսատան պահե Մայր Աթոռը և կուսափորչի Գահը, ինչպես նաև ծաղկող մեր Հայրենիքը, որպեսզի մենք միշտ հընչեցնենք «Եշ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա», ի փառս Աստուծո և Ազգի, ի պայծառություն Հայաստանյայց Ս. Եկեղեցվու:



ՀՆԴԿԱՀԱՅ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԻ ՎԵՀԱՓԱԹ ՀԱՅՐԱԿՈՒՄ ՄԱՏ

Հեռավոր Օվկիանիո խորերեն, Յանկցեի և Գանգեսի ափերեն, տասնյակ հազարավոր մղոններ հեռուաներեն, Զեր զավակները Զեզի հառած են իրենց աշքերը և մեր դարավոր գոյության իրքն խորհրդանշան՝ այս լուափառ Տաճարին և Մայր Հայրենիքին:

Այսօր Սփյուռքի հայությունը, ցրված աշխարհի չորս հովերուն, միսիթարություն կինտու Ս. Էջմիածնի և Մայր Հայրենիքի մեջ:

Արտասահմանի մեջ մենք ուրիշ փրկության ճանապարհ չունինք բացի Ս. Էջմիա-

Կահիրեմի հայոց թեմական խորհրդի անումից խոսք առնելով, պր. Հովհաննես Քենյալյանն ասաց.

Վեհափառ Տեր.

Սրտագին շնորհակալություններ կհայտնեմ Զերդ Վեհափառության և Գերագույն Հոգեոր Խորհրդին, որ մեզի այս բացառիկ պատեհությունը ընծայեց, սրտի անհուն ուրախությամբ և բերկրանքով ներկա գտնվելու Զերդ Վեհափառության ծննդյան հիսնամյա և գահակալության երրորդ տարե-

դարձին առթիվ տեղի ունեցող այս փառահեղ հանդիսությանց:

Վեհափառ Տեղը.

Մենք հոս կգունվինք Ս. էջմիածնի հովանության տակ, մեր ովատը նորոգելու համար հանդեպ Ս. էջմիածնի և մինչև վերջ հավատարիմ մնալու անոր:

Մենք հոս կգունվինք զեզ՝ առաքելանման Հայրապետդ շնորհավորելու այս կրկնակ հանդիսությանց առթիվ և աղոթելու, որ Տերը անսասան պահ է Ամենայն Հայոց Հայրապետությունը, անոր շնորհազարդ Գահակալը՝ Նորին Ս. Օծություն Տ. Ս. Վազգեն Ակաթողիկոսը, Մայր Աթոռ Ս. էջմիածնի և հոն բոլորված միաբանությունը:

Վեհափառ Տեղը.

Իսրայ կմաղթենք, որ իրականանան եկեղեցական Զեր բոլոր ծրագիրները: Կմաղթենք, որ անոնք պասկիլին կատարյալ հաջողությամբ, ի շինություն և ի պայծառություն Հայաստանյայց Ս. Եկեղեցվու:

Արտասահմանի հեռավոր գաղութներեն, հայ ժողովուրդի շախշահիլ մեծամասնությունը Զեզ հետ է և կաղոթ Ս. էջմիածնի և Հայունիքի բարօրության համար:

Կրկին անգամ շնորհավորելով Զերդ Վեհափառությունը, բոլոր սրտով կմաղթենք, որ բարձրյալն Աստված Զեզի պարգևե առողջ և երկար կյանք, որպեսզի մեր եկեղեցվու պատմության այս ալեկոծ օրերուն վայելնք Զերդ Վեհափառության իմաստուն առաջնորդությունը:

Դամասկոսի թեմակալ առաջնորդ գերաշնորհ Տ. Շավարշ եպիսկոպոս Գույամենյանը պաշտոնական ընդունելության ժամանակ ասաց:

«Եստվածարյալ Ս. Հայրապետ և Վեհափառ Տեղը.

Իբր հոգելոր ներկայացուցիչը Դամասկոսի աղքատիկ և սահմանափակ թվով ժողովուրդ ունեցող թեմի, երբ Կալիֆունիո, ՆյուՅորքի, Լոնդոնի կամ Եփիպասոսի Ներկայացուցիչներու կարգին կանցնիմ Ս. էջմիածնի գանձանակի առջևեն, ինքը նույն նկուն կզգամ կարծեք... Կմխիթարյան, սակայն, վերհիշելով Ավետարանի աղքատ կինն ու անոր երկու լումաները:

Նմանապես կսիրեմ մեր հոգելոր պատկերը տեսնել անմահ վարպետի այս խորհմաստ տողերուն մեզ, որոնց մեզ կնկարագրե մեռած մոր մը հանդեպ անոր զավակներուն ի հայոտ բերած հոգեկան ապրումները: Վաճառական որդին գանձ մը բերավ մորը հողակըտին, զինվորականը՝ սուրբ, բահանան՝ սրտաբովս աղոթքը, խեղճով որդին՝ սիրութը... Մասնաւ այդ բուաշափ կծիկը, շնչավորներու կեդրոնական գործարանը,,

ընդունարանը հոգելոր և բարոյական լավագուն հղացքներու, մշտարծարծ խնկաման, ուր կծենճերի կրոնական հրայրքի և ազգասիրական հոգերի կնդրովլը:

Դամասկոսի սիրտը, մասնավորաբար, կտրոփի ի սեր Հայ Եկեղեցվու միասնականության և Հայ ժողովուրդի միության, այն, որ կզեղու սիրով, բաժակի մը նման պատարուն և թաթաղով, հանդեպ Ս. էջմիածնի, անոր Վեհափառ Հայրապետին և Սովետական Մայր Հայաստանի հանդեպ, ընդհանրապես:

Դամասկոսի սրտի երկու խոռոշները կներկայացնեն տեղվույն առաջնորդաբանը, ինչպես նաև 1957 մայիսեն ի վեր հոն փոխադրված Կիլիկիան Կաթողիկոսարանը՝ տեղապահությամբ բարձրապատիվ Տ. Խաղ սրբազն հոր, և որոնք բարձր բռնած են Հայ Եկեղեցվու միասնականության և ժողովուրդի միության դրոշակը պատնեշին վրա, պայքարի մեջ:

Դամասկոսի սիրտը, Մաքսիմ Գորկիի Դանդոյի սրտի նման, կոչված է փարատելու Հայ Եկեղեցվու և ժողովուրդի ծոցին մեջ գոյացած արվեստական խավարը և լուսավորելու Կիլիկիան շրջանակը դեպի միություն և միասնականություն, Ս. էջմիածնի և Սովետական Մայր Հայաստան առաջնորդող ճանապարհները:

Եվ մենք ուրախությամբ և հպարտությամբ կրերենք այդ սիրտը առ ոտու Գահուից Զերդ Վեհափառության:

Պայծառ մնաք, Վեհափառ Տեղը, երջանիկ արեցառությամբ:

Պաշտոնական ընդունելության ժամանակ, Գերագույն Հոգելորդի անունից Վեհափառ Հայրապետի ծենյուան հիմնամյակը և զահակալության երրորդ տարեդարձը շնորհավորեց Գերագույն Հոգելորդի անունամ դրցնեն Արտաշեն Տիրացյանը.

«Մենք, Գերագույն Հոգելորդ Խորհրդի անդամներս, Վեհափառ Հայրապետի առաջին պաշտոնական խորհրդականներն ենք. իբրև այդպիսիք, մենք կոչված ենք գործակցելու նորին Վեհափառության հետ նրա ազգային-եկեղեցական բոլոր աշխատանքների ընթացքին: Եվ իբրև այդպիսին, ուզում եմ Գերագույն Հոգելորդի անդամների և իմ կողմից վստահեցնել ձեզ, թե մեր երեք տարիների գործակցությունը Վեհափառ Հայրապետի հետ մեզ բերած է այն կատարյալ համոզման, — և այս՝ ուրախ ենք մեր ալուղ ևս հայուարարելու, — թե հանձին նորին Սրբության՝ Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռի վրա բազմել է այսօր մի Հայրապետ, բարիս լավագույն իմաստով մի գաղափարական Կաթողիկոս, որի հայրենանվեր, եկեղեցաշներն ու ազգային լայն ծրա-

գրերի իրականացմանը գործակցելը մեզ համար ո'չ միայն հոգեկան և բարոյական մեծ գոհումակովյուն է, այլ նաև մեծ պատիվ:

Արդարև մենք, Գերագույն Հոգմոր Խորհրդի անդամներս, միշտ գործակցել ենք Վեհափառ Հայրապետի հետ այն բոլոր աշխատանքներում, որոնց յուրաքանչյուր հանգըրվանին մենք ունեցել ենք հրճվալից ու ոգմորիչ ապրումներ, որպիսին ունեք այսօր դուք, այս պատվո սեղանի շուրջը հավաքված:

«Վեհափառ» Տեր.

Հանում առաջանահայ թեմին, նվիրական ու հաճելի պարտականությունը՝ ունինք մասնակցելու այս հանդիսությանց, ուր Հայաստանյայց Ս. Եկեղեցին և հայ ժողովուրդը կտոնեն իրենց Հովվապետին՝ Զերդ Ս. Սծության ծննդյան հիսնամյակը և գահակալության երրորդ տարեդարձը, մատուցանելով մեր սրտագին շնորհափորտ թյունները,

Մենք՝ առաջանահայերս, բոլորս հոգումով կհիշենք այն տարիները, երբ վայելեցինք



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՔՅՈՒՐՔՅԱՆՆԵՐԻՆ ԵՎԻՐՈՒՄ Է «ՎԱԶԳՆԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅՈՑ» ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՏՈՐԸ

Ուստի, հանում Գերագույն Հոգմոր Խորհրդի առաջարկում եմ հոտնկայս բաժակ բարձրացնել նորին Վեհափառություն Վաղգեն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի կենացը, մայթելով նրան քաջառողջ և երկար կյանք, իրականացնել կարողանալու համար այն խոշոր ծրագրերը, որոնցով այնքան հարուստ է նորին Վեհափառության միտքն ու սիրութ:

Կեցցե՞ Վեհափառ Հայրապետը»:

Ռումինահայ թեմական խորհրդի անունից, Բուխարեստի պատգամավոր պր. Հովհաննես Գալիփաքյանը կարդաց հետեւյալ գեղեցիկ ուղերձը.

Ձեզ շատ մոտեն: Ճանշցանք Զեր կյանքը, Զեր մտքի արժեքը, Զեր կարծիքները Հայ Եկեղեցիի և հայ ժողովուրդի մասին, հայ դպրոցի մասին և հայ մամուլի մասին, և ամեն մեկ աշխատանքի կամ պաշտոնի մեջ, ուստուցիչ, գոտո, կղերական, մենք տեսանք Զեր մեջ տիպար պաշտոնյան, նվիրյալ դաստիարակը, տիպար վարդապետը՝ հավատարիմ փր ուստին և իր կոչումին:

Ծնած Բուքրեշի մեջ ուր և զարգացաք, Դուք ստացաք որպես ժառանգական հարստություն ֆիզիկական և հոգեկան բացառիկ կորուլ, պահպանված և մշակված խնամքով, մեկը՝ խիստ դաստիարակու-

թյամբ, ուր գլխավոր քաժինը պիտի տանենար Զեր մայրը, մեր Տիրամայրը, ուշադիր հսկողությամբը իր որդիին վրա, մյուսը՝ բազմակողմանի մշակույթով և մնայուն մտածումի կեղունացումովը:

Ուժեղ բնավորության տեր, Դուք շվատ-նեցիք այս ուժը փոքր և անպետք գործերու մեջ. այֆ, ինչ որ ըրիք, եղած է լուսը, լավ մտածված և մեթոդիկ իրագործված, որոնք ապացուցը հանդիսանան բարձր և հաստն հոգիի մը և լայն տեսողության: Եղաք ուղիղ և ներողամիտ բոլորին հետ. սիալները հարվածեցիք ճակատեն, բայց միշտ ալ խնայեցիք զոհերը: Արդարության և ճշմար-տության ծառայեցիք անշեղորեն: Զերմ և սիրալիր եղաք եղոր մը պես, ունենալով յանկեղծ բարեկամության պաշտամունքը: Զեր տված խորհուրդները լուս ճառագայ-թեցին, իսկ Զեր հոգվույն շերմութենեն կար-ծեք թե բոլորիս մեղքերը հալեցան: Մեր զաղությերուն մեջ Զեր պատկանելի ներ-կայտվածը ստեղծվեցալ շինչ և խաղաղ մթնոլորտ մը: 1945-են սկսյալ, Զեր ակա-նատեսի վկայությունները մեր վերածնած, ծաղկող ու զարգացող Մայր Հայրենիքի՝ Սովորական Հայաստանի մասին արթնցու-ցին և սնուցին մեր հայրենասիրական աղ-նիվ զգացումները:

Մեր գաղութի տարեգործությանց մեջ ան-նախընթաց է Զեր գործունեությունը և ուու-մանահայ գաղութը երախտապարտ է այն բոլոր թանկագին ծառայություններուն հա-մար, որ մատուցիք այն երկար տարիներու ընթացքին, զորս անցուցիք մեջ մտաւ:

Հուղարկության միջամտական մեջ այն աշխատանքներուն, ուր ի սրտե ջանացիք նորոգել ու վերահաստատել սերտ կապերը արտասահմանի բորոր թեմերուն հետ, մաս-նակորապես Մեծի Տանն Կիլիկիո Կաթողի-կոսության հետ: Գնահատեցինք Զեր երի-տասարդական կորուլը, հրեշտակային համ-բերությունը և իսկական հայրական սերը. և եթե կատարյալ բավարարություն չգտաք ու դեռ կշարունակե գոյություն ունենալ ան-շատող վիճը, այս հետևանք է այն պարա-գաներուն, որոնք կհետապնդեն անձնական շահեր ու կփորձեն շարադաս քաղաքական ցանցի մեջ առնել, մեր ժողովուրդի զավակ-ներեն ընելու համար վարձկաններ օտար-ներու ծառայության, և հակառակ մեր ժո-ղովուրդի և Եկեղեցի հարազատ շահերուն: Սակայն և այնպես, մենք հավատացած ենք, որ համագործակցությունը տիկարացնող այս պառակտունները շուտով կվերանան և գաղութավայրերու մեջ հայ ժողովուրդը, հեռու Մայր Երկրեն, ինչ որ ալ ըլլան ան-հատական տեսակետները ընկերային խրն-դիրներու մասին, պիտի միավորվի Մայրենի:

Եկեղեցին և դպրոցներու շուրջ, կատարե-լու համար նվիրական պարտականության ա-մենան կենսականը՝ հայ ժողովուրդը պահ-պահել ու ներկայացնել որպես ազգային ամբողջություն, առնելով մնումդի և ուժի ա-ռաջարակ Մայր Հայրենիք Սովետական Հայաստանի շարունակական նվաճումնե-րեն:

Ողջունելով այս հոբելյանը, կմատուցանենք Զերդ Վեհափառության՝ ումանահայության անվերապահ համակրանքն ու խոնարհ որ-դիական սերը և կմայթենք արեգատություն և առողջություն, ին խաղաղությամբ, շարու-նակելու Զեր եկեղեցանվեր և հայրենանվեր բարի գործերը, ի շահ Հայաստանյայց եկե-ղեցի և հանսասանություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Մանոթ մտավորական և բազմավատակ պատմաբան-բանասեր պր. Արշակ Ալպոյան-յանը իր բովանդակալից ողջունի խոսքին մեջ կանգ սովազ մանավանդ Սփյուռքի պայ-մաններում ապրող հայ ժողովուրդը ձուկու-մից փրկելու անհրաժեշտության և միջոց-ների վրա.

«Հայ Ազգին ամենեն կարեար հատկանիշ-ներն մեկը եղած է իր տոկալու կարողու-թյունը, հակառակ բոլոր աննպաստ պայման-ներուն, որոնցմով շրջապատված էր անցյա-լին մեջ:

Մեր գոյության տևականության մեջ, մաս-նակորապես վերջին վեց հարյուր տարիներու ընթացքին, ամենակարևոր դերը կատարած է Հայ Եկեղեցին, որ պահպանած է հայ լեզուն և հայ գրականությունը և հայ մշակությունը բոլոր մյուս տարրերը, և որքան հնարավոր եղած է Հայ Ազգին գոյությունը, որ վտանգված էր, ձուկման վտանգին են-թարկված ըլլարով:

Այսօր, շնորհիվ Խորհրդապահին Հայաստանի Հանրապետության, Հայաստանի մեջ հայ Ազգին որևէ վտանգ չսպառնար և գոյություն շտափի ձուկումի և այլասերումի հարցը և Հայ Եկեղեցին իր հոգևոր և բարոյական գործը կրնա կատարել անվորով, պիտական պաշտ-պանության տակ:

Հիմա Հայ Ազգին վտանգի տակ գտնվող մասը կազմե արտասահմանի հայությունը: Հայ Եկեղեցին ուրեմն արտասահմանի մեջ տմի կատարելիք կարեար դեր մը, վասնզի արտասահմանի հայերը կդունվին հայությունի տմանալու վտանգին տակ:

Արտասահմանի հայերը հետեարար մեծ ակնկարություններ ունին էջմիածնեն և ու-րախ են տեսներով, որ Վեհափառ Վաղքին Ա. Կաթողիկոս ինչ ջանքեր կթափե Եկեղեցին վերանորոգելու, որպեսզի ան ձեռնհաս ըլ-լա իր դերը կատարելու և փրկելու արտա-սահմանի հայերը կտրուտեն:

Ս. Էջմիածին պետք է ըլլա հոգևոր ներշնչարան մը արտասահմանի հայության համար և միկնույն ատեն կապ մը՝ հայերը զողելու համար Հայաստանի և Հայ Եկեղեցվոլ կեդրոնին հետ:

Ուրեմն կեցցե՞ն Վեհափառ Վագգեն Ա Կաթողիկոս և Խորհրդային Հայաստան, որ միասին ապահովեն հայոց ապագան և հայերը հայ պահեն»:

Հոգևոր ճեմարանի փոխ-տեսուչ նոգեցնորհ Տ. Մեսրոպ Վարդապետ Անքարյանը ընդունելության ժամանակ խոսեց հետևյալ գեղեցիկ և բովանդակալից ճառը.

Ճայրահեղ ավանդապահության և Եկեղեցաշխն ոգու, Զերդ Վեհափառության լոնկրկող սկզբունքայնության և մասավանդ Զերբարձր բարոյականության օժտվածությամբ, Կույր պիտի լինել շտեսնելու համար այն բոլոր նվաճումները, որոնք կատարվել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեջ, իբրև քանդակ ու մարմար, կույր պիտի լինել և հոգվով, շտեսնելու համար նաև հոգեկան ու բարոյական այն վերածնունդը, որ կատարվել է Մայր Աթոռի միաբանության յուրաքանչյուր անհատի մեջ և Հոգևոր ճեմարանի յուրաքանչյուր ուսանողի հոգում:



ՊՐ. ՆՈՒՊԱՐ ԿՅՈՒՊԵՆՆԿՅԱՆԸ ՄԱՅՐ ՏԱԶՄ ՏԱԶՄ ԵՐԳԱԽԵՄԲԻ ՀԵՏ

«Շատ սիրելի Վեհափառ Հայրապե՛տ.

Այսօրվա արտակարգորեն խորհրդավոր և նույնշափ էլ հուպիշ արարողություններն ու խոսքերը Զեր բերում են հայ ժողովրդի սրտի անհուն երախտագիտությունը։

Զեր կյանքի յուրաքանչյուր ակնթարթը մեկ օդակն է այն աղամանդակուր մանյակի, որը կազմում է ոսկետառ պատմությունը։ Զեր եռամյա գործունեության և Մայր Աթոռի հրաշափառ զարթոնքի։ Այդ մանյակի մենմի օդակը իր բյուրեղյա պարզության մեջ արտացոյում է այն բոլորը, ինչը նվաճվել է շնորհիվ Զերդ Վեհափառության կասեի

Մենք բաժանելով Զեր հոգեկան տվայտանքները, խորունկ ցավով ենք վերհիշում, որ մեր Եկեղեցու նկատմամբ ուխտագրութ և կործանարար գործունեություն է ծավալվել։ Սակայն, եթե այսօր քաղաքական աննպաստ կացությունը հնարավորություն է տալիս որոշ փոքրոգիների խաղալու համար, կամ ավելի շուտ կրկնելու համար իրենց խաղերը Եկեղեցու դեմ, այդ դեռևս ոչնչով չի խաթարում։ Զերդ Վեհափառության հայրենանվեր, անձնվեր և Եկեղեցաշխն գործունեության վեհությունը։ Աստված միայն գիտե՛ եթե կուավորչի հնադարյան Գահը իր վրա շունենար Զերդ

Վեհափառությանը, ինչպիսի՞ն կլիներ Հայաստանության մեջ մասնակի է առաջարկությունը, որը աննահանջ հավատը Մայր Աթոռ Ս. էջմիածնի միաբանությանը թիւագրում է կրկին ու կրկին անդամ հավատացնել Զեզ և Զեզանով նաև ողջ Հայ ժողովրդին, որ նա անսասան է իր ուստի և երդման մեջ և անձնվիրաբար կրնկակին հետևում է ազգօգուտ, եկեղեցաշեն և Հայրենանվեր գործունեության:

Մայր Աթոռ Ս. էջմիածնի Հոգմոր Ճեմարանի ուսանողությունը այսօր ինձ աղերսել է բերելու համար իրենց մատաշ, իրենց մատղաշ հոգու լավագույն զգացումները ու միայն իրեն Հայոց Հայրապետի, այլ մանավանդ իրեկ իրենց ուսուցչապետի: Եվ համոզեցին ինձ կրկին անդամ հավատիացնել Զեզ բոլորի առաջ, որ իրենք իրենց հոգին պիտի նվիրաբերեն Զեր գործին, որ իրենք իրենց կյանքը պիտի ընծա բերեն Հայրենաշինության գործի համար, որ իրենք պիտի լինեն այն, ինչ որ եղել են մեր երրեմնի մեծ վարդապետները:

Սան-Պառուղի արժանապատիվ Տ. Եղիկի ավագ Քահանա Վարդանյանը իր ողջունի խոսքի մեջ գրել էր.

«Վեհափափա՛ռ Տեր.

Հարավային ամերիկահայոց Զերդ Վեհափառության արժանավոր պատվիրակը՝ գերաշնորհ Տ. Սիրու արքեպիսկոպոս Մանուկյանը, իր կամքեն անկախ պատճառներով, այս անդամ շաբողացավ ներկա գտնվի Զերդ Վեհափառության բարեբաստիկ ծննդյան հիսնամյակի և գահակալության երրորդ տարեդարձին առթիվ կազմակերպված այս փառավոր հանդիսականությանց, ու ինձի, Հայաստանյաց եկեղեցվո համեստ մեկ սպասավորին, Մայր Աթոռի, լուսավորշակերտ Ս. էջմիածնին ցմահ հավատարիմ ծառային հանձնեց Զերդ Վեհափառության Ս. Աջր համբուրելու և իր շնորհավորություններն ու հարգանքները մատուցելու պատիվը:

Վեհափափա՛ռ Տեր.

Զերդ Սրբության և այսքան բարձրաստիճան հոգմուրականներու, պետական ներկայացրության երեսու և մտավորականներու ներկայության, ինձ պես պարզ քահանայի մը կողմե խոսք առնելը ինքնին հանդինություն է, բայց կոսամ, թե Զերդ Վեհափառությունը պիտի ներե իր զավակի այս համարձակությունը, որ կուպա Զեզ հանդեպ անոր զացաց խորոնկ հարգանքներ:

Ծովերով ու ցամաքներով բաժնված, հազարավոր մղոններով հեռու, Հարավային Ամերիկայի մեծագույն ու փառավոր երկրին՝ Բրավիլիային կուգամ, ուր կապրի թվով

փոքր, բայց պատվական հայերե կազմված գաղութ մը, Հայունակարուտ այդ ժողովությունը ինձի պարտականություն տված է, մեր սիրելի Հայրենիքի Սուլր Հողը համրութել վերջ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Ս. Աշն ալ համրութել Անոնք այդ համբուրյուն մեջ դրած են իրենց հայրենասիրական ու որդիական ամբողջ սերն ու Հարգանքը, Բրավիլիայի ամբողջ հայերը, մեկ սիրու մեկ հոգի, կաղոթեն, որ բարձրը յան Աստված անխախտ պահե իրենց Մայր Հայրենիքն ու անոր կենսունակ և շինարար Հանրապետությունը, պայծառ ու անսասան պահէ մեր Մայր Աթոռ Ս. էջմիածնին առողջ, երջանիկ, ու երկար կյանք պարզեւ մեր արժանավոր Հայրապետին, Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին:

Հայաստաննեն դուրս չելլող հայ մը բնավ չի կրնար ըմբռնել ուժգնությունը այն կրակին, որ կայրե օտարության մեջ տվայտող հայերու սրտերը, չի կրնար ըմբռնել այն սրբազն ոգերությունը, որ կունենա առաջին անգամ ըլլալով իր Մայրենի Ս. Հողը համբուրելու բախտավորությունը Դանեցող կտարանդի հայը, չի կրնար շափել ուժգնությունը այն անսահման ոգերության, երբ ան իր աշերով կտեսնե մեր շենչող Հայրենիքի մտք շանցած հառաջդիմությունը, չի կրնար ըմբռնել հիացմունքի այն աստիճանը, որ ան կունենա փր Մայր Հայրենիքը կերտող եղայրյաներու և քույրերու հանդեպ, որոնց քրտինքներու մեշն ծնած է այս ապշեցնող հառաջդիմությունը, չի կրնար ըմբռնել այն խորոնկ երախտագիտությունը, որ անոնք կզգան մեր Հայրենիքի իմաստում, հանճարեղ ու շրջահայաց Պետության հանդեպ, որ այնքան ձեռնհասությամբ կկառավարե մեր երկիրը ու արդյունավոր կդարձնե մեր եղայրյաներու ու քույրերու թափած քրտինքները, չի կրնար ըմբռնել զերմությունը ուղանության այն արցոնքներուն, որոնք կեցնեն անոնց աշքերը, երբ կտեսնե մեր լուսավորշակերտ Ս. էջմիածնի, հայու անխորտակելի և անխախտ հավատքի խորհրդանիշը եղող Մայր Աթոռի վերածնունդն ու հառաջդիմությունը, չի կրնար ըմբռնել որդիական սիրու ու հարգանքի այն խորությունը, որ անոնք կզգան հանդեպ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, որու իմաստության ու ժրաշան գործոնեության շնորհիկ կվերածնի ու կհառաջիմե մեր հոգւոր կյանքը:

Վեհափափա՛ռ Տեր.

Մեր պապերը, դարեր շարունակ, ազատություն երազեցին ու այդ կարոտով ալ մեռան, իսկ այսօր արտասահմանի հայությունը իր ազատ Հայրենիքը փոխադրվի կե-

րազե, ու այդ կարոտով ալ կմաշի: Բրա-  
զիլիո ամբողջ հայությունը, առանց բացա-  
ռության, նույնպես հայրենասեր է. ան-  
ըմբռնած է խաղաղության արժեքը և միա-  
սիրտ ու միաբերան կաղոթե, որ բարձրյալն  
Աստված աշխարհին տա խաղաղություն,  
աղգերու մեջ զորացնե եղբայրության զգա-

խոր հավատքով վերաշինության սրբազն  
աշխատանքին լծված մեր եղբայրներն ու  
քույրերը, կեցցե՛ ու հավետ ապրի ու ան-  
սասան մնա հայու անխորտակելի հավատ-  
քին աղբյուրն ու խորհրդանիշը եղող լու-  
սավորչակերտ Ս. Եջմիածինը, կեցցե՛ և իր  
գահակալության հիսնամյակը տոնելու շափ



ՆԿԱՐԻՑ ԳՐԻԳՈՐ ՇԻԼԻՑԱՆԸ ՀՐԱԺԵԾ Է ԱՌՆՈՒՄ ՎԵՀԱՓՈԽ ՀԱՅՐԱՊԵՏԻՑ

ցամը, իսկ այդ խաղաղութենեն ու եղբայ-  
րական զգացումներն կախված է ինչպես  
բոլոր ազգերու, նույնպես և մեր Ազգի երազ-  
ներու իրականացումը, բարգավաճումն ու  
երջանկությունը:

Կեցցե՛ մեր երիտասարդ ու ծաղկյալ Սո-  
վետական Հայաստանը, կեցցե՛ն մեր Հայ-  
րենիքի իմաստուն ղեկավարները, կեցցե՛ն

շատ ապրի Ամենայն Հայոց արժանքնափր  
Հայրապետը:

Վեհափառ Տեր.

Հայրենակարուտ բրագիլահայերու անու-  
նով, խոնարհաբար կխնդրեմ Զերդ Վեհա-  
փառութենեն, որ հաճիք հիշել մեզ Զեր սուրբ  
աղոթքներուն մեջ. օրնեցե՛ք մեզ, Վեհա-

փա՛ն Տեր, մենք Զերդ Սրբության օրնություններուն պետք ունինք:

Ամերիկահայ Ազգային խորհրդի նախագահ պր. Օսեն Սարյանը, շնորհավորելով Վեհափառ Հայրապետի ծննդյան հիմնամյակը և գահակալության երրորդ տարեդարձը ի դիմաց Ամերիկահայ Ազգային խորհրդի, իր ելույթում ասաց.

«Վեհափառ Տեր,

Այս նվիրական պահուն ինձի համար մեծ պատիվ և հաճույք է բոլոր ամերիկահայերու կողմեմ ներկա գտնվիլ այս ճոխ ճաշկերութին, հայրենական այս շքեղ դաշնանին մեջ, և քաղցր պարտականությունը ունենալ շնորհավորելու Զերդ Սրբության ծննդյան հիմնամյակը և գահակալության երրորդ տարեդարձը:

Կարճ պիտի խոսիմ, բայց այդ սեղմ բառուա մեջ Զերդ Վեհափառությունը կարող է գտնել ամերիկահայոց որդիական սերն ու նվիրութը, անվերապահ և հավիտենական հնագանդությամբ և գործակցությամբ Հայաստանյաց Առաքելական Ս. Եկեղեցին հետ:

Մենք հպարտ ենք Սովետական Հայաստանով: Սովետական Հայաստանը Մայր Հայրենին է համայն հայության: Հպարտ ենք նաև մեր ազգբնիր ու շինարար Վեհափառությունը նորին Ս. Օծություն Վազգեն Ա. Կաթողիկոսով, որովհետև Ան իրապես հայրենասեր է, հայրենաշեն է և իր այդ արարությունը իսկապես որ Վեհափառ է, վեհ է իր փառքին մեջ:

Ուրախացանք տեսնելով, որ մեր սիրելի Հայրապետը կապրի իր ժողովուրդով, անոր հետ ու անոր համար Ասոր մեկ գեղեցիկ ապացույցն էր իր հովվապետական այցելությունը Սփյուռքի հայության մեկ կարևոր մասին, երբ մոտեն շփմագավ ու ծանոթացավ Միջին Արևելքի, Արևմտյան Եվրոպայի լայնատարած հորիզոններուն վրա սփորված, երբեմն պանդուստի երշանկությամբ, հաճախ պանդուստի դժվարություններով պաշարված իր հուսոր միխիթարեց, միխիթարվեցավ և լայն հեռանկարներու ոգեշնչող լույսի տակ վերադարձավ Մայր Աթոռ:

Մենք՝ ամերիկահայերս, կսիրենք հուսալ, որ նման շնորհարեր այցելություն մը կտրվի նաև մեզ:

Մենք խաղաղություն կմաղթենք ամբողջ աշխարհի համար: Այդ խաղաղության միջոցով է, որ փոքրիկ Սովետական Հայաստանը պիտի կարողանա ածիլ ու դառնալ իսկապես Մայր Հայրենիք բոյոր հայության համար, ի մի խմբելով Սփյուռքի տարագիր հայությունը հաջողականացնելով հայ ժողո-

վուրդի դարավոր հույսերն ու արդար բաշանքները:

Վեհափառ Տեր,

Թույլ ավեգ, որ իմ ձայնը միացնեմ Զերդ Սրբության համար արևշատություն և երկար կյանք հայուղներու ձայնին, մաղթեմ հաջողություն և բարօրություն ի փառ մեր Ս. Եկեղեցին և Մայր Հայրենիքին և բանատեղի հետ կրկնեմ:

«Ուր շուքը միշտ և հանապազ:

Մեր զիխիցը անպակաս:

Պատոնական ընդունելության ժամանակ խոսք առավ նաև թերութի «Երիտասարդ հայունի» պարբերաթերթի «Խմբագիր և ծանոթ հասարակական գործիչ ու մտավորական տիկին Սիրան-Սեզա Քյուփելյանը:

«Սիրելի՛ և թանկագի՛ն Վեհափառ.

Թեև վերջինը, բայց կվատահեցնեմ Զերդ, թե ոչ ամենափոքրն եմ Զերդ Վեհափառության զինվորագրալներնեն:

Գիտեմ, կիրանանը խոցած է Զերդ Վեհափառության հայրական սիրտը, բայց այդ դիտումնավոր չէ եղած: Ես կխոստանամ բոլորի անունեն, որ մենք կրուժենք ակամահացված այդ խոցը Զերդ Սրբության սրտին, որ խոցն ու վիշտն է ոչ միայն Հայաստանյաց Եկեղեցվո, այլ ամբողջ հայության: Դուք շատ շուտով հպարտ կը լլաք միրանանցի Զերդ հոգեհատոր ժողովուրդով:

Զարագործությունը եթե մեծ է, անոր հաջորդող զզումը ալ նույնքան մեծ և խորունկ կը լլաք: Թեև լիազորված չեմ կիրանանի հայության անունով խոսելու, բայց վստահ եմ, որ անոնք ալ ունին իմ սրտի և մտքի պես սիրտ ու միտք, անոր համար ամբողջ գաղութի անունեն համարձակաձայն կրնամ հայտարարել, նույնիսկ հերձածող, մոտորուլ խմբակի անունեն, որ ես, ի դիմաց կիրանանի հայության, երջանկություն և հաջողություն կմաղթեմ Զերդ Սրբության:

Միանական այս ոգին, որ կտիրե այս եղ, հայրենական այս շքեղ դաշիճին մեջ, զողելով Սփյուռքի բոյոր հայերը Մայր Հայրենիքի մեջ ազատ և իրեն հայ ապրող իրենց քույրերուն և եղբայրներուն հետ, ինձի համարձակություն կուտա լավատես և քաջըլլալ:

Վեհափառ Տեր, հաջորդ տարին թող ներկա պատգամը հուշի վերածված ըլլա հայ ժողովուրդի միասնությամբ և Մայր Հայրենիքի մեջ ապրող հայ ժողովուրդի երջանկությամբ:

Արգենտինայում հրապարակվող «Հայ Մամուկ» թերթի խմբագիր պր. Գրիգոր Կյոնենյանը իր ելույթում ասաց.

«Արժանատինի մեջ հաստատված մեծամասնությամբ կիլիկեցի հայերու անունեն

կողջունեմ Ս. էջմիածնի Մայր Աթոռի Գահակալ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վաղգին Աղջոնտիր Հայրապետը՝ իր ծննդյան հիսնամյա և գահակալության երրորդ տարեդարձի առթիվ:

Այս սեղանը պատմական է: Ան կխորհրդանշ Սայր Հայրենիքի և Սփյուռքի Հայու-

ժարավի է: Այդ է պատճառը, որ խաղաղությունը պաշտպանողները թանկ ու սիրելի են հատկապես տառապած հայ ժողովուրդի զավակներուն համար:

Արժանատինի հայությունը հոգվով և սըրտով կապված է Ս. էջմիածնի հետ շատ մը պատճառներով, որոնցմե մեկն է նաև այն,



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՁԻ Ա ԿԱՐԳԻ ՈՍԿՅԱ

ԱԴԱՄԱՆԴԱԿՈՒՌ ՀՔԱՆՀԱՆՈՎ ԶԱՐԴԱՐՈՒՄ Է ՊՐ. ԵՐՎԱՆԴ

ԱՂԱՋԱՆՑԱՆԻ ԿՈՒՐԾՔԸ

Թյան միասնությունը Ս. էջմիածնի և Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հետ: Սովետական Հայաստանը, իրու մեկ անդամը Սովետական մեծ Միության, խաղաղության միջնաբերդն է: Աշխարհի մեջ տարբերակած հայ ժողովուրդը խաղաղության

որ Ս. էջմիածնը խաղաղություն կմաղթե համայն աշխարհին: Խաղաղություն կմաղթենք մենք բոլորս, որովհետև միայն խաղաղության մեջ կարելի է խսկապես ստեղծել, վերաշինել և ձեռք բերել հայ ժողովուրդը:

դի հողմացրիկ եղած որդիներու մեկտեղութը իր Հայրենի Տղորուն վրա:

Մեր եկեղեցական կյանքին մեջ ժամանակավոր ճեղքածքներ կան: Անոնք խորթ և դրսեն պարտադրված երևութիւններ են: Չենք կրնար ըսել, թե Հայ Եկեղեցիի նավը սանձագրծ փոթորկի բռնված է: Մենք կզանք, կհավատանք, որ մեր եկեղեցին կենսոնակ է, միաձուլ է և ի վիճակի՝ հաղթահարելու իր ծոցին մեջ խլրտացող բուռ մը մարդոց ոչ հայկական գործունեությունը: Կրնանք այդ ներին դժվարություններուն ալ հաղթել, թիւ ունենանք խաղաղություն: Մենք կհավատանք, որ Հայ Եկեղեցիի ծոցին մեջ գոյացած հերձածը երկար շի կրնար տևել, եթիւ խաղաղություն տիրե աշխարհ մեջ:

Կյուպենկյան հաստատության ներկայացուցիչ և Փարիզի համալսարանի ճարտարապետության ֆակուլտետի դասախոս պր. Եղվարդ Ուրունյանը ասաց, որ ինքն այսպիսի բազմաժողով և բազմատաղանդ մի հավաքութիւն առջև խոսելու համարձակությունը շուրջ, մանավանդ երր սՄեր մեջ ունինք Կյուպենկյանի հարապատը՝ իր զավակը, «Ես տեսա՛, — շարունակեց պր. Ովթուճյանը, — երկրորդ անգամ ըլլալով, իմ ճարտարապետ եղբայրներու նվաճումները, տեսա մեր շինարար Վեհափառ Հայրապետի գործը, տեսա Հայաստանի շինարարությունը: Ուստի բաժակը կրարծացնեմ Հայ Եկեղեցիով փառքին, հարատության և Հայ Հայրենիքի անմահության համար»:

«Երբ ցանկանում եմ Վեհափառ Հայրապետի ծննդյան հիսնամյակի և գահակալության երրորդ տարեդարձի առթիվ երկու խոսք ասել որպես առաջնորդական տեղապահը Ադրբեյջանի հայոց թեմի և որպես Սայր Աթոռի միաբանության թենիսամինը, — ասաց հոգեշնորհ Տ. Տիրայր Վարդապետ Մարտիկյանը, — միտքս է գալիս Պողոս առաքյալի հետեւյալ խոսքը. Անթանալ, ամենեքին ընթանալ, բայց մի որ առնու զյաղթութեանն պսակ» (Ա. Կորեն. Ի 24): Զեր կյանքը անընդհատ ընթանալու է եղել: Դուք, ընտանեկան խոնարհ հարկից մինչև վարդապետական աստիճանը, ապա և մինչև կուսափորչի Ա. Գահը, ընթացել եք միշտ հավատով, անսահման լավասեսությամբ և վստահությամբ ու եռանդով, Զեր ապագայի նկատմամբ վառ հուզերով: Շատերն են գրնթացել և «ընթանում» են, սակայն դժվարության ճանապարհին կեն ճանապարհից դառնում են հետ, հազիվ իրենց ձեռքը դրած մաճի վրա: Սակայն Դուք ընթացել եք միշտ առաջ և արժանացել փառքի պսակին: Զեր կործքը այսօր գարդարփում է փառքի պսակով, որովհետև Դուք երկարատև գործունեություն ունեք և այսօր Զեր սիրելի միաբանությունը,

Զեր հավատացյալ ժողովուրդը և Զեր սիրող բարեկամները կամ իրենց բոցավառ սրտերը զնելու Զեր շինող և շինարար Հայրապետի կոթքին, որպես անթառամ պսակ:

Մենք Զեր հետ ենք, Վեհափառ Տե՛ր, և միշտ պիտի լինենք Զեր հետ, և Դուք մի գեղեցիկ օր իրավամբ պիտի հայտարարեք Զեր հավատացյալ ժողովուրդին, մեզ ցուց տարով նրան. «Ահա ես և մանկունք իմ», Բնտանիքի համար մեծագույն պսակը զավակն է Եվ մենք, Զեր որդիները, պիտի աշխատենք արժանի լինել Զեր սիրող սրտին:

Դուք, որպես «զօրագույն» առաքինեաց», պիտի առաջնորդեք մեզ գեպի աշխատանք և մենք, Զեր Եկեղեցարությամբ, պիտի աշխատենք նորանոր պսակներ, հաղթանակներ ձեռք բերել Մայր Աթոռի պայծառաթիյան և Զերդ Վեհափառության փառքի համար»:

Սփյուռքահայ սիրված բանաստեղծ պր. Վահե-Կանյանը իր ողջունի զերմ խոսքերի մեջ ասաց.

«Եկեղեցիա՛ն Տե՛ր.

Զեր երջանկարեր ծննդյան հիսնամյա հոբելյանին և գահակալության երրորդ տարեդարձին բարերաստիկ առթիվ, կինդրեմ ընդունիկ՝ անայլալ հարգանքիս ու հիացմունքին հետ՝ արևշատ կյանքի ու բազմարդյուն հովակապետության իմ սրտագին մաղթանքերս:

Ս. Եշմիածնի սրբավանդ Տաճարեն ներս և անոր ինկարույր խորանին առջև հոգին մասնակից եղա այն սրտարտիս տոնակատրության, ուր Աղջոր, Հայրենիքին ու Եկեղեցին միացան իրենց սիրույն ու հարգանքին մեջ՝ հանդեպ իրենց լուսաժառանգ ու լուսաբաշխ Հայրապետին:

Տեսա շահազարդ խորանը Մայր Տաճարին, ուր երախտագիտ հավատացյալներու բազմությունը կզգար իր վերև հրճվագին ներկայությունը Հայաստանյաց Եկեղեցվու պայծառանուն հայրապետներու հոգիին, միասնաբար ողջունելու նոր կուսարարը կուսավորչի կանթեղին:

Ցավով ու սրտմտությամբ կմտածեմ սական, թե անխառն չէ ցնծությունը Ովկոյալին, ինչպես ուրախավորներուն, որովհետեւ այս օրերում վիրապ կողմուր է սիրուց Հայ Աղջիկն ու Եկեղեցիին՝ անպատակ այն հարվածներեն, որոնք անխնա մոլեգնությամբ մը տըրվեցան ու կորպին՝ մարդու կողումին ու հայ անունին անարժան մորորյալներու սև ձեռքերով:

Զերդ Վեհափառության ընծայված մեծարքի այս համազգային արտահայտության մեջ ես կտեսնեմ նաև միակամ դատապարտությունը անս'նց, որ դափեցին ու կշարունակին դավել ընդդեմ Աղջիկն ու Եկեղեցիին միասնականության, վաճառելով իրենց խիզ:

Տը երեսում արծաթի: Կհավատամ նույն ա-  
տեն, թե Զեր իմաստովթյունն ու անվերա-  
ծելի սրբություններուն հավատարիմ մեր ժո-  
ղովուրդին կամքը պիտի հաջողին զգաստաց-  
նել գոնե անս'նք, որ իրենց մեջ կկրեն դեռ  
նշուլ մը հայ հոգիեն, ու պիտի վերադարձ-  
նեն զանոնք գիրկը հայության և անոր հո-  
գևոր մայր Ս. էջմիածնին: Խսկ անոնցմե ո՛վ

Հայրենիքին, հովանիին տակ հայ հարա-  
զատ Պետության ու մեծաշնորհ զանգերովը  
մեր առաքելատիպ հայրապետներուն, որոնց  
արժանավոր շառավիղը կողջունեմ Զեր խո-  
րահավատ անձին մեջ:

Որդիական ակնածանքով ու հավատար-  
մության անդառնալի ուխտով կմատչիմ ի  
համբուլը Զեր Սուլբ Ազին»:



ՎԵՀԱՓՈՐ ՀԱՅՐԱՊԵՏԾ ԱՐՄԱԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿ ԱՓՍԵ Է ՆՎԻՐՈՒՄ  
ՊՐ. ԵՐՎԱՆԴ ՀՅՈՒՍԽՅԱՆԻ

որ համառի մնալ իր մոլորության մեջ, պի-  
տի դառնա փոշի՝ ժամանակի հովին դեմ:

Էջմիածնինը, որպես միաձուլ էությունը  
հայության հավատքին, մնացեր է ու կմնա  
անսասան, Արարատին պես, ու կպայծառա-  
նա հավետ՝ ծոցին մեջ մեր վերածաղկող

«Նախրի շարաթաթերթի խմբագիր բա-  
նաստեղծ պր. Անդրանիկ Մառուկյանը ընդու-  
նելության ժամանակ խոսք առնելով, ասաց  
չետևյալը».

«Առիթը հանդիսավոր է, բայց պիտի զա-  
նամ որ իմ խոսքս ոչինչ ունենա հանդիսա-

կան: Կանգնած ենք ահա տասնվեց անգամ հարյուրամյա մեր սրբատեղիին մեջ, երշանիկ հովոմով և նախանձելի բախտալորությամբ, ու միակ արժանավոր կերպը՝ որով կրնանք երախտահատուց ըլլալ, ամեն մեկու շնորհված այս բախտին և պատվին համար, անկեղծությունն է հանդեպ մեր Վեհափառ հյուրընկալին և մանավանդ մեր իսկ խղճին:

Ուրեմն թույլ տվեք հիշեցնել կարդ մը՝ ծըշ-մարտություններ:

Աշխարհը բաժնված է երկու ճակատներու, երկու հոսանքներու, երկու գաղափարախոսություններու: Մենք բաժնեցինք աշխարհը երկու մասի: Բայց մեր տաժանելի ճակատագիրը դասավորեց այնպես, որ մեր ժողովորդին կեսը ապրի այստեղ, Հայրենիքին մեջ, և մյուս կեսը մնա այստեղ, Հայրենիքին դուստ, ենթակա տարրեր ուժերու, աշխարհագործական և քաղաքական տարրեր պայմաններու աղեղությանց: Անժիտելի և պայծառ իրականություն է այլևս Հայրենիքը այստեղ, բայց նվազ շոշափելի փաստ չէ նաև Սփյուռքը իր մոռալ իրականությամբ: Հայրենիքը գտած է իր ճամբան, հստակ, որոշ և անսայթաք իր ուղին: Սփյուռքը բաժնված է Հայրենիքին ու բաժնաված ինքնիր մեջ: Կոտորակված և տարտղնված հայությունը կպահն գեռ միացման միակ կետ մը, Հոգեկան կամուրջ մը՝ շնորհիվ Ո. Էջմանին: Արդ, բոլոր դիտակից հայերուն նվիրական պարտին է պահել էջմիածինը իր պատմական դերին և նվիրական կոլումին մեջ: Հարգել, սիրել և պաշտպանել՝ բովանդակ հայությունը հավաքական ապրումի մեջ պահող այս սովոր հաստատությունը: Ըստ է մեկը. «Վերցուր Արարատը՝ Հայաստանը կփիխ: Կավելցնենք. «Վերցուր էջմիածինը՝ հայ հոգին կմենի:

Հետևաբար, մեր դժբախտ պայմաններուն և թշվառ վեճերուն մեջ էջմիածինը կողմ մը չէ, այլ կողմնացուց մը, պատնեշ մը չէ ուրիշ պատնեշի մը դեմ՝ այլ Հոգեկան ամրոցը հավաքական մեր ապրումներուն, փաստաբան մը չէ ի պաշտպանություն ճակատի մը՝ այլ գերագույն դատավորը բոլոր ճակատներն վեր ու ճակատներուն վերև, և վերջապես՝ էջմիածինը Հայրենիքը չէ ընդդեմ Սփյուռքին՝ այլ բովանդակ հայությունը ընդգրկող ոգեկան ծիածան մը՝ ի սփյուռք աշխարհի և ի Մայր Երկրի:

Ու մենք, որ եկած ենք ողջունելու տարեդարձը արդեն իսկ հիսնամյա, բայց իր հանգամանքին համար գեռ երիտասարդ Գահակալ Ս. Էջմիածինի, գիտնանք անաղարտ և մաքուր պահել իրմե մեզի փոխանցվող ներշնչումը և մեզի հետ տանինք արտա-

սահման իր խոսքերն ու զգացումները՝ Մեռնի պես սովոր և լուսի պես անբիծ:

Եվ ինչ կթելադրե մեզի Վեհափառ, և ինչ կթելադրեն ահավասիկ մեր Պետության ներկայացուցիչները, որ կըազմին իր շուրջը: Ու ոք կպատվիրե մեզի՝ որ երթանք արտասահման և պաշտպանենք Հայրենիքն ու էջմիածինը իրար բզեցելով և օրնիբուժի իրարու դեմ նիզակ ձոճելով Վազգեն Վեհափառը և մեր Պետության ղեկավարները ուրիշ բան չեն ցանկար Սփյուռքի հայություննեն, եթե ոչ մեր խաղաղությունը, հաշտ ու ներդաշնակ կենցաղը, մեզ սերը Հայրենիքին հանդիպ ու Հայրենիքին սերը մեզի համար: Այսպես կըսեն իրենց հանդիսավոր խոսքով, այսպես կըսեն հրապարակի վրա, մտերմության մեջ, պաշտոնապես թե անպաշտուն:

Տանինք ուրիշն մեզի հետ իրենցմե մեզի փոխանցված այս ազնիվ և ազնացնող ներշնչումը, Հայրենիքի անդամները այս շերմ ու վարակիչ պահը: Մենք շատ վեճը և ճղճիմ պայքարներ ունինք այնտեղ երեմն դպրոցի մը շուրջ, եկեղեցիի մը կամ ակումբի մը շուրջ, թաղականի մը կամ երեսփոխանի մը հաշվույն: Այդ բոլորը կազմեն հայրենազորկ աղղոթանայում մեր առօրյան, այդ բոլորը կազմեն հայրենազորկ մարդու մեր արատը, ու շընենք այնպես, որ սուրբ բաներ և սրբազնա խորհրդանիշներ տրորպին ու լըրձին, մեր անսուրբ պայքարներուն և անհեթեթ տագնապներուն մեջ:

Կրնանք իրարու դեմ ցցվելու բազում պատճաներ ունենալ, և մեր ուժերեն վեր՝ ճակատագրական ստիպություններ, մնալու այնպես, ինչպես որ հնք: Բայց կա՛ ու կմնա գերագույն պատճառը, նվիրականորեն շքեց փրողությունը, որ մեզ բոլորս կմշե, ազգովին խոնարհելու ազգային համիլտենական մեր սրբատեղին առնե, Ս. Էջմիածինի դարավոր խորհուրդին մեջ, Արարատի շուրջին տակ և Օշականի ուկատավալյալին այնքան մոտիկի: Ու այս բոլորին մեջ, եկող ու անցնող մահկանացու կաթողիկոսներու անմահ շարանի դեմ, ահավասիկ հերթական ընտրյալը, հստակ, մաքուր, բարի և անուշ մեր Վազգեն Վեհափառը, որուն հիսնամյակին ի հարգանս եկած ենք ծովեր և օվկիանոսներ կտրելով ու մեզի հետ բերելով սերն ու հարգանքը տարագիր հայության: Կատարենք հրապարակով ավանդական մաղթանքը՝ կրկար կյանք, ուժ և համբերություն մաղթելով իրեն, բայց և շմոռնանք տանիլ իրմե լավագույն մասնիկը իր անձեն որպես նշխար արտասահմանի հայության:

Բարեկամ մը ըսակ քիչ առաջ. «Առյա կամ մեր Վեհափառին դեմքին վրա: Կտեսնենք բոլորս այդ լուսի, որ կուտա աղնիվ արյու-

նի մը և մաքուր ծնունդի մը բնական օրենքով։ Այդ լուսը տեսանելի է բոլոր այն աշքերեն՝ որոնք կուր չեն, շիլ չեն, ամպամած չեն։ Կույսը վիճելի չէ։ Կույսը լուս է ու կտեսնենք։

Բայց գիտնա՞նք տեսնել նաև լուսը Վաղգեն Վեհափառին հոգիին մեջ։ Այդ լուսը կճառագայթե բովանդակ հայության վերև։ Հայաստանի մեջ ապրող հայության, աշխարհի բոլոր անկյուններուն մեջ ցրված հայրուն համար, առանց խորության։

Այստեղ կերած մեր ազն ու հացը արդար պիտի ըսլլա երբեք մեզի համար, եթե ուրիշ բան տանինք մեղի հետ Ս. էջմիածնեն, Վաղգեն Վեհափառեն և Մայր Հայրենիքեն։

Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգիշնորհ Տ. Վահան Վարդապետ Գալամդարյանը, հանուն իր թեմի շնորհավորելով Վեհափառ Հայրապետին, ասաց, որ Արարատյան թեմը, Վեհափառ Հայրապետի ծննդյան հիսնամյա հոբելյանի և գահակալության երրորդ տարեդարձի բարեբաստիկ առիթով, Վեհափառ Հայրապետին նվիրում է «Զիկ» մարգարի հայրենական մի ավտոմեքենա։

Արարատյան թեմի հավատացյալների այս սկզբ ընդունվեց որոտագին և ցնծալից ծափահարություններով։

Լիբանահայ ծանոթ մտավորական և հասարակական գործիչ մեր Հրաշ Սեղրակյանը իր ողջունի խոսքում ծանրացալ Սփյուռքի հայության դեպի Մայր Աթոռ Ս. էջմիածնը ունեցած հավատարմական զգացմունքների վրա նա ասաց.

«Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Վաղգեն Ա.-ի ծննդյան հիսնամյակի և գահակալության երրորդ տարեդարձի տոնակատարություններու առիթով անհրաժեշտ է մի անգամ ընդմիշտ հավաստիացնել բոլորին, որ արտասահմանի հայությունը, իր բացարձակ մեծամասնությամբ, հավատարմորեն կապված է և կապված կմնա էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության Մայր Աթոռին, կիսոնարհի անոր վեհության առջև, կներշնչվի և անկե կստանա իր հոգերու ու ազգային սնունդը։ Ս. էջմիածնը մեղ համար ոչ միայն Հոգեմոր կեղորն է, այլ նաև ազգապահապանումի ազնվագույն ներշնչարանը, հույսի և լուսի անսպառ աղբյուրը։

Մենք, արտասահմանի զանազան երկրներու մեջ ցիրուցան ապրող հայերս, ծովման և ազգային կորստին վտանգին դեմ մեր պայքարի ճանապարհին, ուժ և կորով կըստանանք Մայր Աթոռի աստվածարյալ Հոգապետի հորդորներին, կոգմորվինք ու կիսանդավառվինք մեր Հայրենիքի Մովիտա-

կան Հայաստանի մշակութային, տնտեսական և նյութական նվաճումներեն։ Մեր հույսն ու ապավինը ունենալով Ս. էջմիածնին ու Երևանը, առաջ կընթանանք լուսավոր ճանապարհով, հաջողությամբ կհաղթահարենք բոլոր վտանգները և մեր սրտերու մեջ վառ կպահենք Հայրենասիրական աղնվագույն զգացմունքը։ Մենք պիտի շարունակենք հայ մնալ նաև ապագային, և այս՝ շնորհիվ Ս. էջմիածնի բարի հովության, շնորհիվ մեր Հայրենիքի պետության և ժողովուրդին հերոսական հաջողություններուն։

Մեր սերը Մայր Երկրին և Ս. էջմիածնին հանդեպ նոր չէ, այլ ամրակուու, խորու զործուու։ Մենք էջմիածնին և Հայրենիքին հավատարիմ ենք և սրտով Մենք այդ սերն ու հավատարմությունը կընթառնենք որպես ուսկի կամուրջ՝ հայ ժողովուրդի երկու մեծ հատվածներուն՝ Մայր Երկրի և Սփյուռքի հայության միջև։ Պատմական շարք մը դեպքերու բերումով, ֆիդիկապես միայն բաժնիքած են իրարմե հարության այդ հատվածները։ Այդ բաժանումը ժամանակավոր է, որովհետեւ Մայր Հայրենիքի և Սփյուռքի միջև կա, զոյլություն ունի հոգեկան միասնականությունը։ Այնքան ժամանակ, որ գոյություն ունի հոգեկան միասնականությունը, Ս. էջմիածն ու արտասահմանակ, որ գոյություն ունի սրտերուն, մեր մըտքերուն, մեր հոգիներուն անխորսակելի փոխարձ կապերը, մեր անքակտելի միասնականությունը, արտասահմանի մեջ մենք կդիմադրենք դժվարություններու և ամեն տեսակ հարձակումներու, կպահպանենք մեր հայկական գոյությունն ու դիմագիծը։ Մեր նպատակը բարի է ու ազնիվ, կուզենք մնալ հայ, ապրիլ որպես հայ։

Հայաստանյաց Եկեղեցվո մեջ այժմ ծափած տագնապը լուրջ է, մտահոգիչ և ցավալի։ Բայց այդ տագնապը էապես արհեստական է, հրահրված քաղաքական նպատակներով և զուրկ՝ ազգային, պատմական և իրավական հիմքերի։ Մենք հաստատ համոզված ենք, որ հայ ժողովուրդի դեպի Ս. էջմիածնը ունեցած սիրու և հավատարմության զգացմունքներու առջև կփշրվին բոլոր արգելքները և Սփյուռքի մեջ կկերական միասնությունը մեր ազգային-եկեղեցական միասնությունը Ս. էջմիածնի Մայր Աթոռին շուրջ։

Մայր Աթոռը ունի իր արժանավոր գահակալը հանձնի Վազգեն Ա. Վեհափառ Կաթողիկոսի։ Անոր հուամյա իմաստուն գործունեությունը մեծապես բարձրացուց էջմիածնի հեղինակությունը ի սփյուռք աշխարհի, և մենք որդիական հարգանքով կիսոնարհինք Անոր առջև, փափագելով, որ Ան շարունակե մնալ բարի Հովկապետը մեր հավատացյալ ժողովուրդին, միշտ մնա ծաղկազարդ և ամուր-

կամուրջ մը արտասահմանի և Մայր Հայ-  
րենիքի միջև:

«Արարատ» թերթի խմբագիր պր. Արտեն  
Կիտուրը իր բաժականառի մեջ վեր հանելով  
վեհափառ Հայրապետի հոգմոր-մշակութա-  
յին, ազգային-եկեղեցական գործունեությու-  
նը, ասաց.

«Այսօր իր փայլուն գործունեությամբ նո-  
րին Ս. Օծություն Վազգեն Ա. Ամենայն Հա-  
յոց Հայրապետը մեզ կներկայանա որպես  
մեր ազգային-եկեղեցական նշանավոր դեմ-  
քերեն մեկը»:

Այսօր Խորիմյան Հայրիկին տրված երթեմ-  
նի «Արծիվ Վասպորտականի» տիտղոսը վե-  
րածված է «Ամենայն Հայոց Արծիվ»-ի:

Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Ա-ը  
Սփյուռքի հայության տված իր այցելու-  
թյամբ և Հայ Եկեղեցվո կազմակերպության  
հետ կապված իր ծրագրած հեռանկարներով  
ցուց տվավ, որ ինքը իր առաքելական  
բարձրության վրա է՝ հայ ազգային-եկե-  
ղեցական միասնականության առնչությամբ:

Ամենայն Հայոց Արծիվը, որպես Ամենայն  
Հայոց Կաթողիկոս, իր կողքին ունի Հայրենի  
կառավարության բարոյական օժանդակու-  
թյունը:

Մենք Նորին Ս. Օծության ծրագրային հե-  
ռանկարի մեջ կտեսնենք երեք միջինոն հայ  
ժողովուրդի միասնացած հավաքականությու-  
նը, որ միակ գրավականն է հայը զարձնելու  
տոկուն և ընդունակ՝ ընդդեմ ամեն տեսակ  
և ամեն կողմեն եկած հարվածներուն:

Այսօրվան համագայլին այս հավաքու-  
թին մեջ կուզեմ տեսնել որոշումներ՝ իրա-  
կանացնելու մեր երազը, որով միայն չքա-  
ցած և խորտակված կտեսնենք Մայր Աթո-  
ռի գեմ ուղղված հարվածները:

Կմաղթենք ուժ և կարողություն և կյանքի  
հարատևություն Նորին Ս. Օծություն Վազգեն  
Ա. Կաթողիկոսին, որպեսի իրականացած  
տեսնենք մեր երազը, որ նաև Իրն ալ է»:

Հորելանական ճաշկերությին զերմ և սըր-  
տագին հնչեց նաև Մայր Աթոռի աշխարհա-  
կան աշխատողների շնորհավորության ան-  
կեղծ ձայնը պր. Հմայակ Սեդարյանի ող-  
ջուկի խոսքում:

Հնորհավորության զերմ, սրտառուշ խոսք  
ասաց նաև «էշմիածին» ամսագրի խմբա-  
գիր պր. Արքուն Հատիւանը հանուն Մայր  
Աթոռի պաշտոնաթերթ «էշմիածին» ամսա-  
գիր հազարավոր ընթերցողների, որոնք շատ  
հաճախ խմբագրությանն ուղղված իրենց  
նամակներով իրենց ուրախությունն ու երախ-  
տագիտությունն են հայունել Վեհափառ Հայ-  
րապետի ազգային և եկեղեցաշեն գործու-  
նեության համար:

Հնդումելությունն անցավ զերմ, իսանդա-  
վառ ու Հայրենասիրական մինուրուտում:  
Հնդումելությունն իրենց շնորհաւա-  
գանակցությունը բերեցին երգով՝ գերա-  
շնորհ Տ. Կոմիտաս սրբազնը, բարեշնորհ  
Պետրոս, Կարապետ և Հակոբ սարկավագ-  
ները, երգուհի օրիորդ Մարիա Գեղոնին,  
արտասանություններով՝ բարեշնորհ Սանդրո  
սարկավագը և ուրիշներ:

Հորելանական զվարթ սեղանների շուրջ  
ժամերն անցնում էին արագ ու հաճիլի:

Այժմ ուժի է կանգնել թամարդա գերա-  
շնորհ Տ. Մամբրէ արքեպիսկոպոս Սիրովա-  
յանը՝ իր վերջին խոսքն ասելու Սրբազնը  
խոսում է իսանդավառ, համոզկեր շեշտով ու  
ծայնով.

#### ԸԿԵՐԱՓԱԿԻ ՏԵՐ.

Թոլոր խոսք անողները վեր հանեցին Զեր  
անձնավորությունը իր բազմակողմանի ար-  
ժանիքներով: Ես ասոնց մասին պիտի շառ-  
սցմարտություններ կան, որոնք ապա-  
ցուցի կարոտ չեն, չշմարտություններ կան,  
որոնք ի հառաջագումն ընդունված են մար-  
դոց կողմեն: Միայն այս մեկ քանի օրվան մեջ  
ապրած մեր խանդավառ կյանքը մտածել  
կուտա ինձի, թե ի՞նչ երևույթ է այս: Մենք  
անցուցինք ահավոր դժվարություններ, ահա-  
վոր տագնապներ: Մեկը ես եմ, որ քա-  
շած եմ սարագրության արյունու ճամ-  
րաններն և հիացումով տեսած եմ մեր ժո-  
ղովուրդի հաստատակամությունը ապրելու,  
մեր ժողովուրդի հավատքը և այս հավատըն  
էր, որ փրկեց զայն ու այսօր այդ ժողովուրդն  
է, որ ուժի կեցած է իր Հայրենիքին մեջ ա-  
զատ, անկախ իր Հայրենի հողին վրա, իր Կա-  
թովարությամբ, իր Կաթողիկոսությամբ, և  
ան ցուց կուտա բովանդակ աշխարհին և  
մարդկության, թե հայ ժողովուրդը մենակու-  
ժողովուրդ չէ, այլ հավատենապես ապրելու  
Ո՞ւ են, ո՞ւ են անոնք, որ մեր մահվան  
վճիռն ստորագրեցին, Մեռած են անոնք,  
բայց մենք կանք և գոյություն ունինք և պի-  
տի մնանք այժմ և հավատյան:

Այս երկիրը սուրբ երկիր է: Մեր բանա-  
ստեղծը որքան իրավամբ երգած է: «Մեր  
երկիրն է սուրբ. մեր հողին վրա Աստված է  
քալեր, ստեղծելով զնամ, մեր լեզուն, և  
խոսեր նախ ինք: Եղբա՛րք, հա՛յ ապրինք»:

Եվ ժողովուրդ մը, որում Հայրենի Հողին  
վրա Աստված քավեր է, ես կհավատամ այդ  
ճշմարտության, ժողովուրդ մը, որում լեզվով  
Աստված խոսած է, այդ ժողովուրդը ո՛չ թե  
մեռնելու ժողովուրդ է, այլ հավատենապես  
ապրելու:

Եվ այսօրվան պատգամը պիտի ըլա մեզի  
ամենու, դարձյալ բանաստեղծին շատ ի-  
մաստալից հետևյալ խոսքը: «Հայ ապրինք,

որ մեր որդիք ալ, եղբա՛րք, կարենան պարծիլ, որ զմեզ ունին հարթօ:

Չըլլանք հայ անվան անարժան: Հայաստանի մեջ ապրող հայեր, Սփյուռքի մեջ ապրող հայեր: Հայ՝ ապրինք և հայ՝ մեռնինք:

Խանդավառ ծափահարովթյունների տակ, թամադա գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը հրավիրում է Վեհափառ Հայրապետին՝ իր պատգամը և հայրապետական օրհնությունը տալու բոլոր ներկաներին:

Վեհափառ Հայրապետը, խորապես հուզված իր անձի հանդեպ ցուցաբերված այսպան չերմ և սրտառուց հարգանքի և սիրո արտահայտովթյուններից, խոսեց իր ամենապերճախոս, բովանդակալից և հուզումնաշատ ճառերից մեկը.

«Մեծանորգ պր. Սարգիս Գասպարյան, գերաշնորհ սրբազն եղբայրներ և հարգածան պատգամավորներ, սրբազն ներկայացուցիչներ ենույթ եկեղեցիներու և դուք բոլոր, սիրելիներ Մեր.

Կիսորհինք. թե ձեզմե ամեն մեկը կպատկերացնե իր մեջ այն հոգեկան հուզումը, այն խոռվիր, որ կապրի Մեր անձը այս պահուա: Զափազանց զգածված ենք անշուշտ և պարտինք Զեզ բոլորիդ Մեր խորին շնորհակալուրյան խոսքը բայլ այնքան չերմ ու անկենդ խոսերուն համար, որ ուղղված էին Մեր անձին: Հավատացեք, որ պահ մը Մեզ այնպես կրվի, թե այս բոլոր խոսերը իրականության մեջ Մեր անհատական անձին հետ աղերս մը չունին: Այնքան մեծ է և սուրբ այն գաղափարը և այն հավիտենական հաստատությունը, որուն կծառաւնենք, որ մեր շեշին անձնավորությունները կլծունին, կանենտանան և կեռուսին նույնիսկ: Մենք բոլորս, հյուրենին իրականություններ, իրեւ մարմնական գոյություն և նոյնիսկ իրեւ իմացական գոյություն, մտածող էակներ, շատ նվազ նշանակություն ունինք այն հոգենր և բարոյական իրականություններուն առջ, ինչպիսին են մեր սուրբ հավատքի վեմ Ս. էջմիածինը, մեր Ազգը իր պատմությամբ, իր հոգեռ-բարոյական, մշակութափան արժեքներով և մեր Հայրենիքը հավիտենական: Այս բոլորը իրեւ բարոյական իրականություններ, ավելի եջմարիտ իրականություններ են քան թե ինքը տեսանի հյուրական իրականություններ, և անա թե ինչու Մենք Մենք չենք, այլ կմիանունք Զեզի՝ փառարանելու համար Ս. էջմիածինը և Ամենայն Հայոց Հայրապետությունը:

Միրելի՝ հայ ծողովուրդի զավակներ, ձեզմե շատ շատերու նման սիյուռքահայ մըն ենք, ծնողս ալ սիյուռքահայ եղած է, և այսպիս ո՞վ զիտե քանի սերունդ դեպի ետ:

Մենք ձեզմե շատերուն նման եղած ենք օտարական մը, թե բարի նողի մը վրա եյուրենկալ, որուն հանդեպ միշտ երախտագիտական զգացումներ պիտի մնան Մեր մեջ, այնպես, ինչպես դուք բոլորդ ձեր սրտերուն մեջ երախտագիտության, հարգանքի և հավատարմության զգացումներ և մտածումներ ունիք և պետք է ունենաք ձեր պատկանած երկրներուն նկատմամբ, ուրկի դուք այսօր կուգաք:

Իրեւ այդպիսին, իրեւ հայ պատաճի մը, մեծցած ենք հայկական թմտանեկան մընլուրտի մեջ, Հայ նկեղեցվու օրինության ներքեւ և հայ պզգային կյանքի շրջանակին մեջ. 13—14 տարեկաննեն սկառու եղած ենք և մինչև այս պահուա հավաքական այս հայկական կյանքին մեջ կապրինք զանազան վիճակներեւ, ձևեր և աստիճաններեւ անցնելու հետո: Եվ տիրական զգացում մը գոյուրյուն ունեցած է Մեր մեջ փոքր տարիքնեն ի վեր, տարօրինակ զգացում մը, փետուուի մը դեպի ինչ որ Մենք ալ չկինք գիտեր ինչ: Բան մը կպակսեր Մեր մեջ, կամ ավելի նիշտ, բանով սր ինքինքնիս ամբողջացսելու աներածեշտուրյունը կզգայինք, իրեւ իմացական և բարոյական էակ, և այս բոլորը կրսենք ոչ իրեւ անհատական արժանիք, որովհետեւ վատան ենք, որ բոլոր հայ երիտասարդներու պարագան է այս. Մեր ընկերներն ալ այսպես կապրեին: Ամեն անզամ, երբ օտար դպրոցներու մեջ «Արմենիա» բառը կլսենք, բունդ կելլի մեր սիրաբ: Ամեն անզամ, երբ Արարտ բարը կարտասանվեր, կիսենքանային կարծեք, և երե, Աստված մի արացցե, պատմենք որ մեկը ծիծաղով կամ հինգեանքով վիրավորեւ այս սուրբ բառերը, նոյնիսկ մեր արյունը պատրաստ էինք բափելու: Օտար համբաներու վրա, այսօր ալ շատ շատեր Սփյուռքի պայմաններուն մեզ՝ երիտասարդներ, մտավորականներ, պատաճներ փետուուի մեջ են, և երբեմն ինքինքնին կկորսենքնեն: Մենք ալ այդ բափառումները ունեցած ենք, որովհետո ոգեբանութենք բնական երևոյթ կուգանք և երբեմն բնազդական զգացումներու ուղղությունը կիրիսեն կամ կշեղնեն: Եթե պատվեր մը կուգեք տանիլ ձեզ հետ, մանավանդ մեջ երիտասարդ սերունդին, մանավանդ մտավորականության, երիտասարդ մտավորականության, այդ պատվերն է՝ հեռու մնալ միայն վերացական գաղափառներեւ առաջնորդվելու փորձուրենեն: Մենք մտավորական մըն ենք, այնուամենայնիվ կկրկնենք, որ միայն վերացական գաղափարներու առաջնորդվիլ մեզ կտանի դեպի անույլ նապարհներ և դեպի կորուստ:

Եր 1945 թվականին Մենք առաջին անգամ Մեր ուստի դրիմ Մայր Հայրենիքի հոգին վրա, այդ բայցին կարծեք տարիներու այդ սպասում Մեր մեջ հանկարծ պայծառացալ և Մենք ինքինին գտանք, եղանք այն, ինչ որ կորոնենք ըլլալ, զգացինք, որ Մենք հայ ժողովուրդի զավակ ենք, և Մեր հակատագիրը այդ պատճեն սկսյալ պիտի շկրնարձնվի Մայր Հայրենիքն, Մայր Հոգին, հայ ժողովուրդի կյանքն և հակատագիրնեն, ինչ որ ալ պատճեն:

Վատան ենք, քեզ ձեզմ ամեն մեկդ կարպած է Ֆրանցի Վերֆելի վեպը: Այստեղ հոյակապ պատկեր մը կա. Գարբիել Բագրատյան եկած է Յորլան-Օլուգ, իր որդիվայն՝ Ստեփանի հետ, որուն մայրը Գրահոսունի մըն էր, ինչպես գիտեք: Ստեփանը օր մը առաջ մորմեն հրաման առնելու, կրածրան Մուսա լեռան վրա, վայրի ժայռերն վեր, ուր հովտիսկ իր կյանքը վատանգի տակ կըրնար ըլլալ, և հոգնելի վերջ, բարուրյուն մը կուգա իր վրա և անուշ հունի մը անձնատուր կըլլա: Հեղինակը, որ մեծ հոգերան մըն է, կըսէ. «Այդ պահուն հայոց Աստվածը իր ձեռքը դրակ Ստեփանի վրա, և այդ պահեն անհիկա դարձավ այդ հողին զավակը ինկապես»: Մենք կիսորինենք, քեզ ամեն մեկ հայ մարդ, ամեն մեկ հայ երիտասարդ մահավանդ, նոյն ապրում կունենա, երբ այստեղ կուգա: Չեզմե շատեր Մեր անձին մեջ զան զանազան հասկուրյուններ, արժանիքներ գուցեց: Չենք գիտեր, քեզ այդ բոլորը ինչ շափով Մենք կրնանք արդարացնել, բայց երեք բույլ տափ ժիշ մը անհամեստ ըլլալ, կուզենք բնոգծել, համենայն դեպս, հատկանիշ մը, որ կընդունինք, քեզ Մերը պետք է ըլլա: Այն է՝ Մենք մեր ուխտին հավատարիմ մնացինք, այսինքն շրամնվիլ մեր Մայր Հոգի կանչեն, շրամնվիլ մեր ժողովուրդի հույզերնեն, շրամների մեր բազմադարյան և աստվածակառույց Ս. Էջմիածնի լույսեն: Վատան եղեք, Մենք ձեզի անկենուրյամբ կըսէնք, որ բացանիկ կարողուրյուններու անձնալորուրյուն չենք եղած և չենք, սակայն կիսորինենք, քեզ երեք ուրական կամ կարողուրյուններ մեր մեջ ի հայտ եկան, այդ շնորհիլ Մեր այս հոգեկան վիճակին է: Երեկ կըցանք ինքնինինինին հայրեկ մեր եկեղեցին, մեր Ազգին Եջմարտապես և ամբողջապես: Մենք գերեք տեսականորեն այն զգացումն ունինք, որ մահավանդ Մեր Կարողիկոս ըլլալն այս կողմ Մենք Մենք չենք, այլ կա միայն Ամենայն Հայոց Հայրապետուրյունը, որուն ինսարի և հակատարիմ ծառան ենք և պիտի մեանք: Երեկ կուզեք, Մեր կյանքն ու Մեր գործուներյունը իրենք իրենց մեջ իրականուրյուն մը չեն,

իրենք իրենց մեջ արժեք մը չեն, այլ պատասխան մը այն ձայնին, որ կուգա մեր հողի ընդերքներեն և մեր սուրբ հակատի բարձունեներեն: Եվ Մեր այս հոգեկան ապրումին մեջ, մեր սուրբ հակատի բարձունեներեն եկող լույսը և հողին ձայնը գրեթե նույն իրականուրյունն են, աերածանելի մեկը մյուսն, ինչպես հառագայրը իր լույսն:

Սիրելինենք: Երեք տարիներու Մեր գործունենուրը ձեզի ծանրությունը կարծիք գոյն, և ավելի հանգամանուրն իսունելու ափիքը պիտի ունենանք բայց մեր ծրագրի հինգշարքի օր, երբ կիսնդրենք ձեզմ բոլորեղ, որ բարի ըլլակ համախմբվելու Ս. Էջմիածնին լսելու համար Մեր զեկուցումը, նշգրիտ բիւերու վրա հիմնված, ի մասին Մեր երեք տարիներու գործունենուրյան և համեստ աշխատանքին: Ուսեմն այս բալորին Մենք չենք անդրադառնար այս պահուս:

Վերջացնելեա առաջ սակայն կուզենք անգամ մը և Մեր սրա խոսք բայց դեպի մեր Ս. Էջմիածնին: Այստեղ որոշ խոսողներ ակնարկներ բրին որոշ դժվարուրյուններու նկատմամբ, որոնք ստեղծվեցան արտասահմանի մեջ բանի մը տեղեր: Անշուշտ այդ բոլորը նշամարիս իրականուրյունն են, սակայն կուզենք Ձեզ հավասարացնել, որ այդ բոլորը Մեզ վրդովեցնելեա, վշտացնելեա կամ զայրացնելեա, կամ Աստված մի՛ արացը՝ հուսահատեցնելեա պիելի կտիւրեցնեն, կտրսեցնեն անոնց հակատագրին համար: Այդպիսի պահեր քեզ հանախ կապրինք, սակայն անոնք Մեր գիտակցության մեջ խորունկ վերեր չեն բանար, որովհետեւ ի վիճակի չեն բանալու: Եվ ամեն անգամ երբ Մենք Վեհարանն ուրս կուզանք, բայելով և կամ ինքնաշարժով, և մեր զանազան հիմնարկուրյունները, կայցելենք՝ եկեղեցիներ, վանենք, Հոգեւոր Ճեմարան, ինքը՝ Մայր Տաճարը, մեր աշխատանոցները, բոլոր մշուշները կանենանան ակերարի մը մեջ: Մենք մի բար Էջմիածնի բարերուն վրա շարված, ավելի կարծե, բան քեզ անոնց ամբողջ աղմուկը:

Եվ բույլ տվեք, որ չկարողանանք անցնել այն ուրախության, հուզումի հզոր պահին վրայեն, որ մեր վրա ենտ բողոք դրական և բարերար իմաստով այն օրը, երբ ամերիկանայուրյան նվերը՝ պր. Աղամանյանի շանեներով ձեռք բերված տպագրական մեքենաները, առաջին անգամ Մայր Արքուն ներս մտան: Այդ օրը մեր հոգիներուն կիրակին էր: Եվ պատահմամբ բարձրաստինան հյուր մը ունեինք Մոսկվային, եպիսկոպոս մը, որուն ենտ սեղանի առջև էինք, երբ լուր ստացանք, քեզ առաջին մեքենաները ներս մտան Մայր Արքունի դարբասներ; Ուսի

ելանք և գրեթե արտասվեցինք: Եվ այնքան հոգված էինք երկի, որ Մեզի նետ ուսւ եպիսկոպոսն ալ հոգվեցավ և գեղեցին նառ մը արտասանեց: Ահա՝ Մեր հոգեկան վիճակը, ահա Մեր իրական կյանքի ապրումներուն մեկ եշմարտ պատկեր:

Մենք լավատես ենք, ինչպես առաջին վայրկյանին էինք, որովհետև կիավատանք ստեղծագործ, շինարար աշխատանքին, դրական գործին, կիավատանք հոգեորբարյական շինուրյան: Եվ այդ աշխատանքը Մենք պիտի շարունակենք: Եվ այն չերմ խոսեցր, որ կլսենք ձեր շրբունքներն, և կտեսնենք ձեր աշխեռուն մեջ մեծ ուրախուրյունը, երբ կզգանք մեր ժողովուրդի սրտին զարկը, Հայաստանին ներս թե Հայաստանն զուրս, Մենք ավելի լավատես կդառնանք, Մեր ուժերը կրազմապատկինն, Մեր եռանդը կանի, և վասահ ենք, որ Մենք, երե այրպիսի հոգեկան վիճակի մեջ ենք ձեզմով շրջապատված, դուք Մեր կողքին, Մեզի նեցուկ բարոյապես և եյուրապես, Աստված Մեզի նետ, Հայաստանի կառավարուրյունը բարյացակամ, ա ի ինչ՝ կրեանք վախինալ:

Մեր եկեղեցաշեն աշխատանքները ծրագրված են և բայլ առ բայլ, կետ առ կետ պիտի իրազորդվին: Կրեան երեմն դաենդաղիլ անոնք արտաքին հանգամանքներու բերումով, կամ թեքնիք պատճառներով, սակայն անոնք երեք կանգ պիտի չառնեն, և Մենք հաջորդաբար պիտի կարողանանք Մեր հավատացյալ ժողովուրդին ներկայացնել Մեր նոր աշխատանքներուն, Մեր շինարարական նոր գործերու ապացույցը հառաջիկային:

Սիրելի՝ ներկայացուցիչներ արտասահմանի հայուրյան: Մենք կիավագինք, որ դուք, վերաբանալով ձեր երկրները, տաեիք ձեզի հետ զմայի հիշատակներ մեր Հայրենիքն և մեր վերաշինով գեղածիծաղ երեաննեն, Տանիք սուրբ հիշատակներ և միփրարուրյուն և օրինուրյուն Ս. Էջմիածնեն, ձեր բոլոր սիրելիներուն, ձեր բարեկամներուն: Պատմեցիք նաև անոնց այն, ինչ որ տեսաք իրեն դրական և շինարար աշխատանք Մայր Արքուն ներս, խոսեցիք անոնց Մեր ապացածիքին մասին, խոսեցիք նաև Մեր մտածումներուն և Մեր լիճերուն մասին: Եվ այնպես բող ըլլա, որ բոլոր Մեր և ձեր տեսիլները մեկ կետի վրա հանդիպին և միասին հառաջդիմնենք, նույնիսկ իրարմ անջատ և նեռու բալելով, միասին հարվածնենք, մեր ընդհանուր գործին ի խնդիր:

Կիավագինք նաև, որ ամեն մեկդ տանիք ողջույն և օրինուրյուն Հայոց Հայրապետին կողմէ, Քրիստոնեուրաբ սյուն Ս. Էջմիածնեն: Ս. Էջմիածինը հայկան ըլլալով մեկտեղ, չմոռնանք երեք, որ ան նաև համա-

բրատոնեական հավատի վեմ է և «սին լուսոյ», ահա մոտ երկու հազար տարիներէ ի վեր: Եվ այդ հնադարյան Ս. Տաճարեն կիավագինք, որ ողջույն և օրինուրյուն տաճիք ձեր երկրներուն և այն ժողովուրդներուն, որոնք Զեզ կիյուրընկալեն: Ոչ միայն դուք, այլ Մենք ալ ձեզի հետ երախտապարտ են անոնց, բոլոր այդ պետուրյուններուն: Մեզի համար պետական իշխանուրյան մեջ բարբերություններուն չկան: Թուրքին հանդեպ ունինք նույն և հավատար վերաբերմունք՝ հարգանքի, հավատարմուրյան՝ ամեն մեկս այն երկրին հանդեպ, ուր կապրինք: Հայաստանյայց Նկեղեցին կրոնական հաստատուրյուն է և այդպես ալ կուզենք որ մենա: Անպիս ինչպիս մեր եկեղեցին այսուհետեղ, Սովորական իշխանուրյան մեջ բաղականանուրյամբ չի զբաղիր և պետք չէ զբաղի, այլ միայն մեր հոգենոր և եկեղեցական աշխատանքներով, այնպես ալ կուզենք, որ Մեր օրինակին հնետելիք բոլորդ, մեր բոլոր հոգենորականները, մեր բոլոր եկեղեցական իշխանուրյունները, որ պեսզի մեր եկեղեցին ըլլա այն սուրբ հաստատուրյունը, որու նկատմամբ ոչ ոք ոչ մեկ կասկած մտածելու իսկ առիր չունենա: Եվ այս ոգիով աշխատելով, կիսորդինք, թե մենք պիտի զորացնենք մեր եկեղեցիները արտասահմանի մեջ, այս ոգիով գործելով, պիտի հալրաբարենք բոլոր դժվարուրյունները, որ կամ և նոյնիսկ երե մեր դեմ պատերազմի դուրս զալ ուզենք, մենք զանոնք պիրի հաղթենք խաղաղուրյան ոգիով և եշմարտուրյամբ:

Ահա, սիրելի՝, այն պարզամբ, որ կուզենք որ ձեզ հնետ տանիք ձեր երկրները:

Մենք անսասն հավատուով և նվիրումով ու հավատարմուրյամբ, Ս. Էջմիածնուով պիտի իրականացնենք մեր ժողովուրդի միուրյունը, որպեսզի պարծանենք, հապարտուրյամբ, ամեն մեկը, ո՛ր երկրին մեջ, ալ որ ըլլա, ի՞նչ վարշածելի, իշխանուրյան ներք ալ որ ըլլա, կարենա դալանիլ իր սուրբ հավատքը, պաշտել իր Ս. Էջմիածինը և սիրել իր Մայր Հայրենիքը, իր սուրբ նողը նվիրական: Մենք կիսորդուենք բոլորը, որ ըլլան իմաստուն, բայց միածամանակ համարձակ, որովհետև Մեր գործը սուրբ է և Աստված Մեզ հնետ, և, ինչպես Պողոս առաքյալը կրսե, «Երկ Աստուած ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեզ հակառակ»:

Սիրելի՝ պատգամավորներ, սիրելի՝ եղայրեներ, սիրելի՝ հյուրեր, կվերջացնենք Մեր խոսքը, անգամ մը ևս Մեր երախտագիտուրյունը հայտելով ձեզ բոլորիդ և օրինելով այս օրը, որ մեզի պարզեցավ և միասին

ապրեցանք և ուրախացանք Ս. էջմիածնի շնորհներուն ներել:

Հավելապարհ մեր շարշարված և խաչված բայց այսօր փրկության և խաղաղության ափին հասած հայ ժողովուրդը իր վերածնած Մայր Հայրենիքով:

Հավելապարհ մեր արտասահմանի հայ ժողովուրդը՝ Ս. էջմիածնի շուրջ:

Խաղաղություն և օրինուրյուն ի սիյուս աշխարհի ցրված Մեր բոլոր զավակներուն անխորի:

Խաղաղություն և օրինուրյուն մայր Հայրենին, Ս. էջմիածնին: Ամենակարողն Աստված բռն լսե Մեր աղորքը և բռն շարունակե ըլլալ Մեզ նեցուկ, պահապան և օգնական և առաջնորդ, շարունակելու համար Մեր եկեղեցաշեն գործը, ի փառ Աստուծուն և ի փառ հայ հավատացյալ ժողովուրդի, ամեն»:



Երկուշարթի, երեքշարթի և չորեքշարթի, Հոկտեմբեր ամսի 13—15-ին, պատվարժան պատգամավորներն ու հյուրերը, խմբերի բաժանված, այցելություններ տվեցին Երեվանի տեսարժան վայրերին և մայրաքաղաքի գիտական և ուսումնական հաստատություններին, եղան Մատենադարանի նորակառուց շենքում, համալսարանում, թանգարաններում:

Հոկտեմբերի 14-ին և 15-ին նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունեց թեմակալ առաջնորդներին և պատգամավորներին առանձին-առանձին ըստ թեմերի և նրանց հետ ունեցավ զրուց՝ Սփյուռքի թեմերի և ազգային-եկեղեցական կյանքի շուրջ:

Հոկտեմբերի 14-ի երեկոյան, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, բոլոր պատգամավորներն ու հյուրերը, Հայֆիհարմոնիայի համերգային մեծ դահլիճում, ներկա եղան համերգի: Դիրիժոր Օհան Դուրյանի ղեկավարությամբ կատարվեցին դասական երաժշտության ընտիր կտորներ:

ՄԱՂԹԱՆՔ ԵՎ ՔԱՐՈԶ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄԱՅՐ ՏԱՅԱՐՈՒԹՅՈՒՆ.—Հոկտեմբերի 15-ին, չորեքշարթի, երեկոյան ժամը 5-ին, Մայր Տաճարի զանգերի սուրբ դողանջով, Հոգուրական և աշխարհական պատգամավորները, ուխտավորներն ու հյուրերը, Մայր Աթոռի միաբանության հետ, հավաքվեցին Մայր Տաճար, հջման Ս. Սեղանի առաջ ծընթադիր աղոթերու համար ովասն խաղաղութեան ամենայն աշխարհին:

Հսկման հուզէլ և խորհրդավոր արարողություն Մայր Տաճարում: Նախագահում է Վեհափառ Հայրապետը: Հոգմոր Ճեմարանի

սաները, աղերսալից քաղցրությամբ, երգում են հակման երգերն ու շարականները: Ամբողջ եկեղեցին ծունկի եկած երգում է հայոց «Տէր ողորմեա»-ն և բոլորի սրտերից բարձրանում է սուրբ աղաշանքը: «Տու կ աշխարհիս խաղաղութիւն»:

Արարողության վերջում խաղաղության մասին ոգեշուած քարոզ է խոսում Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը.

«Խաղաղուրին բռում ձեզ, վաղաղուրին զիմ տամ ձեզ»:

«Խաղաղությունը դարերի երազն է: Մարդկությունը միշտ աղոթել է աշխարհի խաղաղության և ժողովուրդների միշկ հաճության և համերաշխության համար»:

Այսօր էլ խաղաղությունը մարդկության համար կարևորագույն անհրաժեշտություն է: Առանց խաղաղության պատկերացնել անգամ կարելի չէ ո՞չ ճշմարիտ հասարակական կյանք երկրի վրա, ո՞չ առաջադիմություն, ո՞չ հանգստություն:

Հիսուս, որ եկել էր աշխարհ՝ ուղղելու համար կյանքի խոտոր ընթացքը, հաստատելու մարդկային բոլորովին նոր հարաբերություններ սիրո, խաղաղության, արդարության սկզբունքների վրա, տեսական խաղաղության ամուր հիմքերի վրա էր խարսխում իր վարդապետությունը. Ճշմարիտ խաղաղարաց, զի նոքա որդիկ Աստուծոյ կոչեցին:

Աստուծո Որդին, մարդկության փրկության համար աշխարհ գալով, երկնային սիրո հուրը և ճշմարիտ խաղաղության սերմերը ցանց ամենուրեք: Բայց աշխարհ հաճախ մոռացավ նրա խաղաղության պատգամը:

Թեև անցել են դարեր ու հազարամյակներ, սակայն քրիստոնեական սիրո և խաղաղության վեմ սկզբունքները չեն իշխում ամենուրեք, այլև հաճախ անգործեն բռնաբարվել են ու բռնաբարվում են տակավին:

Միթք այս մասին չի վկայում մարդկության ողջ տարեգործությունը՝ լի զարհուրելի անարդարություններով, արյունահեղ պատերազմներով, ծանր զրկանքներով ու թշվառությամբ:

Այսօր էլ համաշխարհային պատերազմի ահավոր սարսափը Դամոկլյան սրի նման կախված է մարդկանց գիւներին:

Որքան բախտավոր ու երջանիկ պիտի լիներ մարդկությունը, եթե նրա բոլոր ուժերն ու միջոցները ուղղվեին միայն կյանքի խաղաղության և շինության վեհ նպատակին:

Հսկման և աղոթի այս սուրբ ու խորհրդավոր պահին, հայոց հավատի այս Մայր Կենտրոնից, որտեղից դարերով լուս, սեր

և խաղաղություն են բաշխվել մեր ժողովրդին, սրտագին մաղթանքներ են արվել համայն մարդկության եղբայրության համար, այսօր ևս այստեղից մեր հոգիների խնկառուկը աղոթքն է բարձանում դեպի վեր՝ իշեցնելու համար երկնային բարձունքներից սիրո, արդարության և խաղաղության շնորհներ աշխարհի վրա, բոլոր մարդկանց մտքերի և հոգիների վրա, որովհետև մարդկանց ներքին, հոգեստը աշխարհի խաղաղությամբ և երջանկությամբ են պայմանավորված և արտաքին աշխարհի խաղաղությունն ու երջանկությունը: Ինչպես ասում է առաքյալը՝ մարդկանցից են ենուում և նախանձ, և ագանություն, և թշնամություն, սպանություն, ամեն արհավիրք և ավերածություն:

Մենք հավատով և հույսով լի աղոթում ենք առ Աստված ուլասն խաղաղութեան ամենայն աշխարհի և հաստատապես համոզված ենք, որ այս է իդեալը նաև բոլոր ժողովուրդների, որոնք մանավանդ քիչ են տեսել ուրախ և արևոտ օրերի:

Աշխարհում շկա մի ժողովուրդ, որն այնքան ծարավի և կարու լինի խաղաղության, որքան մեր ժողովուրդը, եվ սա ճշմարիտ իրականություն է, որովհետև ո՛չ մի ժողովուրդ չի տեսել այնքան անասիլի թշվառություններ ու տառապանքներ, որքան միը փոքրիկ, բայց հերոսական ժողովուրդը: Բացե՞ք բազմադարյան պատմության էջերը և կտեսնեք այնտեղ դառն տանջանք, ծով արյուն ու արցունք: Հայաստանը բարձրաբերձ լեռների աշխարհ է: Սակայն պվելի բարձր են եղել հայոց վշտի լեռները:

Մեր ժողովուրդը իր ծով ցավերի միջից շարունակ փափագել ու խաղաղություն է աղերսել երկնից: Ամենասուրբ երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն, Աղոհիս հայոց՝ սէր, միութիւն: Հայ ժողովուրդն աղոթել է միշտ, որպեսզի ուղեսցին պատերազմունք, դադարեսցին հարձակմունք, թշնամիաց, տնկեսցի սէր և արդարութիւն ի յերկրի:

Խաղաղությունը հանապազորդ հացի, ջրի, օդի շափ անհրաժեշտ է եղել մեր ժողովուրդի համար:

Աստվածապարգև խաղաղության շնորհիվ է, որ մեր շինարար ու արիակամ ժողովուրդը կարողացավ ընդամենը մի քանի տասնամյակում վերաշինել ու ծաղկեցնել իր Մայր Հայրենիքը:

Աստվածապարգև խաղաղության շնորհիվ է, անշուշտ, որ մեր եկեղեցին իր ազգանվեր Հայրապետի իմաստուն հովապետության ներքո նոր հասակ է առել ու գեղեցկացել, կյանք ու մարմին են առել մեր հազարամյա վանքերն ու եկեղեցիները, փթթում ու ծաղ-

կում է ընդհանրապես մեր եկեղեցական-հոգմոր կյանքը:

Մեղ պետք է երկարատև և կայուն խաղաղություն, որպեսզի է՛լ ավելի բարգավաճի մեր սիրելի Հայրենիքը, իրականություն դառնան մեր տարագիր եղբայրների նվիրական երազները՝ մեկտեղվելու հայոց կենսավառ արևի տակ, Ս. էջմիածին և Հայրենի շեն օջախների շուրջը, այստեղ հավիտյան միասին աղոթելու, միասին շինելու և ստեղծագործելու:

Մեղ պետք է կայուն խաղաղություն, որպեսզի համերաշխություն, միասնականություն վերահաստատվեն նաև մեր եկեղեցական կյանքը ներս և է՛լ ավելի ծաղկի ու հզորանա Մայր Աթոռ Ս. էջմիածինը:

Միայն խաղաղության պայմանների մեջ է, որ ամեն մի ազգ, ամեն մի ժողովուրդ պիտի կարողանա գտնել իր արդար ձգտումների իրականացնամը, կերտել իր երջանկությունը և իր ապագան:

Մեղ համար մեծապես հաճելի և ուրախալի է նշել, որ բոլոր ազնիվ մարդկանց կողքին, բոլոր քրիստոնեական եկեղեցիների կողքին Հայաստանյաց եկեղեցին ևս, Մայր Աթոռ Ս. էջմիածնի և իր աստվածարյալ Հայրապետի գլխավորությամբ, իր արժանի տեղն է գրավում խաղաղության պահպանության սրբազն գործում: Եվ դա՝ իր մշտական աղոթքներով, իր հետևողական խաղաղափրական կոչերով և քարոզներով, քրիստոնեական արդարության և եղբայրության վսեմ գաղղափարների տարածումով, իր բոլոր խաղալ և շինարար գործերով: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ը խաղաղության իր կոչերից մեկում, արտահայտելով մեր եկեղեցու և համայն հայ ժողովորդի զգացմունքներն ու խորոնկ ցանկությունը, ասում է: «Հայ եկեղեցին և հայ ծողովուրդը շեն ցանկանում պատերազմ: Զեն կամենա պատերազմ ոչ ոքի համար, աշխարհի ոչ մի անկյունում: Մեր իղձն ու մեր իդեալն է վահաղորդիւն հեռաւրաց, խաղաղութիւն մերձաւրաց, խաղաղութիւն ամենեցուն»:

Սիրելի հավատացյալնե՛ր. հավատում ենք, որ Աստուծու բարի կամքը պիտի թագավորի երկրի վրա ամենուրեք, և ըստ մարգարեի անսուտ վկայության, գայլն ու գառը, առյուծն ու ինձը միասին պիտի ճարակեն, պատերազմական բոլոր զենքերը պիտի փշըրվեն և վերածվեն աշխատանքի և կառուցման գործիքների, պիտի գա հավիտենական խաղաղության երջանկարեր շրջանը:

Աղոթենք, որ այս բազմալի օրը շուտով գա, այլև երբեք շարյուհություն խաղաղության սպիտակ աղավնին և պատմությունն

այլևս միայն հաջողություն, ուրախություն և երշանկություն արձանագրի իր էջերում:

Աղոթենք նաև սիրո և խաղղության վերահաստատման համար մեր Ազգի և մեր Եկեղեցու ծոցում, Ս. էջմիածնի հովանու տակ:

Թող՝ Աստված միշտ անշարժ պահի իր իսկ հիմնած ալու Ս. Աթոռը, չնորդելով նրա Գահակալին երկար օրերու:

ՀՈՐԵԼՅԱՆԿԱՆ ՀԱՆԴԵՍ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ.— Հակման արարողության ավարտին, Վեհափառ Հայրապետի գիտվորությամբ, բոլորը առաջնորդվում են Հոգեործեմարանի հանդիսարանը, ներկա լինելու համար Հոգեործ ճեմարանի կողմից նորին Ս. Օծության ծննդյան հիսնամյա և գահակալության երրորդ տարեդարձին նվիրված հանդեսին:

Հնշում է Հայաստանի Պետական Հիմնի նվագը: Բոլորը ուտքի են: Հանդեսի բացման խոսքն է ասում Հոգեործ ճեմարանի վերատեսուշ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Արքահամյանը, ապա ընթերցում է իր ինքնադիր գրաքար բանաստեղծությունը՝ ձովագծ նորին Վեհափառությանը:

Հոգեործ ճեմարանի սաները երգում են փոխ-տեսուշ նոգեշնորհ Տ. Մեսրոպ Վարդապետ Անքարյանի բառերով և պր. Մովսես Նարպարյանի Երաժշտությամբ գրված Վեհափառին նվիրված խմբերուր:

Այնուհետև Հոգեործ ճեմարանի ողջ ուսանողության անոնցից երախտագիտական խորունկ ու ջերմագին զգացմունքներով զեղուն ուղերձ է կարդում բարեշնորհ Սանդր սարկավագ թեհրույցյանը.

«Վեհափառ Տե՛ր.

Պատմական օրեր ենք ապրում: Համայն հայ ժողովուրդը տոնում է շնորհազարդ և առաքելատիպ Հայրապետի ծննդյան հիսնամյա հորելյանը: Մենք, Զերդ Սրբության հոգեծին զավակներս, խորին սիրով ու հարգանքի չերմ լցված լցված էջմիածնաշեն, ժողովրդանվեր և Հայրենասեր Հայրապետի հանդիպ, շտապում ենք մեր սրտի ծաղիկը ավելացնել այն երիներանգ մեծ ծաղկեփնչի վրա, որ հայ ժողովուրդի կողմից ներկայացվում է Զեզ Զեր ծննդյան հիսնամյա հորելյանի և գահակալության երրորդ տարեդարձի առթիվ:

Վեհափառ Տե՛ր, Զերդ Սրբության հանդես մենք լցված ենք որդիական սիրո ակնածակից ոգով: Սիրո քաղցրաբույր ծաղիկ է երախտագիտությունը, իրեն անուշանությունը, շնորհընկանը կողմից մշտաշարժ բուրումով ուղղվում և բարձրանում է դեպի բարերարը: Մեր Բարերարը

Դուք եք, Վեհափառ Տե՛ր, մեր Հայոն ու սիրելի Ուուցիլը Դուք եք, որի շուրջ մենք համախմբված ենք սիրո և եղախտագիտության շերմ զգացմունքներով:

Մենք, Մայր Աթոռի սարկավագներու, ունենք մեկ նպատակ այս սուրբ Հարգի տակ. դա այն է, որ մենք կարողանանք Զերդ Սրբության հավատով հավատալ, Զեր սրտով զգալ, Զեր սիրով սիրել և Զեր սուրբ ներշնչումով գործել:

Զեր կյանքի ու աշխատանքի օրինակով մենք մշտապես մեր ուշադրության կենտրոնում ենք պահում մեր կոշման բարձրությունը, մեր պատասխանատվության զգացմուր: «Որդի Հարգազատ զնմանութիւն հօրն բարձր»:

Զեզ հանդեպ մեր հոգիների անկեղծ և անայլայլ որդիական սերը պիտի կազմի մեր կյանքի խորհուրդն ու իմաստը:

Զերդ Վեհափառության Հայրական շնչի տակ օրավոր աճում և հասունանում ենք, մտքով զարգանում, ազնիվ բաղձանքներով լցնում մեր ամրող չությունը, որպեսզի վաղը, Զեր օրհնությամբ, անբասիր և օրինակելի վարք ու բարքով Հոգեորդականներ դառնանք և բարձր պահենք այն վեհ և նվիրական կողումը, որը ճշմարիտ հայ հոգեորդականին է:

Փառք և պատիվ Վեհափառ Հայրապետիդ, որ այս օրերին Հայ Եկեղեցու պատմության մեջ լրացավիդ ճանապարհ է բացում մեր համար, ինչպես Երեղեն սյունը՝ անապատում թափառդ իսրայելացիներին:

Ուրախության ու վերացման այս պահին, մենք, սարկավագներ մեր որդիական ձայնը խառնում ենք ամրող հայ ժողովրդի ձայն և աղերսում ենք Ամենակալից:

«Ամեն հայի սրտից բխած,  
կի՞ր այս ձայն, ով Աստված.  
Երկա՛ր կյանք տուր Հայրապետին,  
Երկա՛ր օրեր Հայոց Զօր»:

Սրտառուշ ուղերձ է կարդում նաև Գ դաստիանի ուսանող Խաչիկ Արքահամյանը.

«Վեհափառ Տե՛ր.

Բացառություն ուրախ ու ցնծալի օր է այսօր, որովհնաւ բովանդակ հայ ժողովուրդը հանդիսավորապես նշում է Զերդ Ս. Օծության ծննդյան ու գահակալության զույգ տարեդարձները: Համաժողովրդական ցնծությունը համակել է նաև մեզ՝ Հոգեործ ճեմարանի ուսանողներիս, որովհնաւ հանձնի Զեզ մենք այսօր ողջունում ենք կուսավորչ Տան արժանընտիր Գահակալին, որի իմաստուն զեկավարության և Հայրական հոգատարքության շնորհիվ Հոգեործ ճեմարանը դարձել է այն լուսավորության կենտրոնը, որը մեզ հաղորդակից է դարձնում Հայրենի ավան-

դությանց բոլոր սրբություններին։ Մենք այս-  
տեղ սովորում ենք ճանաչել ու սիրել մեր  
ժողովրդին, զինվել ու զորանալ հոգեկան ու  
մտավոր այն բոլոր արժեքներով, որ մեր  
ժողովուրդը ստեղծել է իր բազմադարյան  
գոյության ընթացքում։

Հայաստանյայց Եկեղեցին, իր անվան  
վկայությամբ իսկ, գերազանցապես հայ է։  
Հայաստանյայց Եկեղեցին այն միակ հաս-  
տառաթյունն է, որի մեջ շնորհ է հայ հա-  
վատացյալ ժողովորդի ամրազական սիրտը։  
Էջմիածինն ու նրա աստվածընտիր հայրա-  
պետներն են ներ այն արթուն և խիզախ  
նավապետները, որոնք մեր անցյալի դաժան  
ու փոխորդու օրերին իրենց իմացական կո-  
րովով և տու առավագությամբ հայ ժողովորդին  
հասցրել են խաղաղության և ապահով ու  
երջանիկ կյանքի նավահանգիստը։ Նրանք  
պահել, զարգացրել ու մեջ են հասցրել մեր  
հանձարեղ նախնիների կերտած նյութական,  
իմացական ու հոգեկան բոլոր արժեքները,  
որոնցով մենք այսօր արդար իրավամբ  
հպատանում ենք։

Այսօր, շնորհիլ Զերդ Ս. Օծության իմաս-  
տով ղեկավարության և հայրենանվեր գոր-  
ծունեության Ս. Էջմիածինը առավել ևս գե-  
ղեցկացել է՝ համելով իր երեմնի փառքի  
ու շքեղության օրերին։ Այսօր էջմիածինը  
դարձել է այն լուսավոր միացման կետը՝  
դափի որը ուղղված են բովանդակ հայության՝  
հույսով ու հավատով առցոտն աշքերը։

Այս հանդիսավոր պահին, Զերդ Ս. Օծու-  
թյան ծննդյան և գահակարության զույգ  
տարեղարձների երջանիկ առիթով, արտահայ-  
տելով մեր խնդացությունն ու որդիական  
սերը, ուսանողներս միաժամանակ ուզում  
ենք հավաստիացնել Զերդ Սրբությանը, որ  
մենք ոչինչ չենք խնայի Զերդ հույսերը լիո-  
վին արդարացնելու համար, մենք կոսվո-  
րենք գերազանց, մեր ամբողջ միտքն ու լու-  
սաբաղձ հոգու յուրաքանչյուր մասնիկը  
կլցնենք հոգեար գիտելիքներով, անշեղորեն  
և աննահանց կերպով կկատարենք հայ  
հավատացյալ ժողովորդի՝ մեզ հետ կապած  
երազանքները, կլինենք Հայաստանյայց  
Եկեղեցու խիզախ և աննկուն մշակները,  
մեր ուժերի ներած շափով կմատուցենք  
մեր ժողովորդին այն ամենը, ինչ այս սովոր  
հաստատությունը, շնորհիլ Զերդ ամենօրյա  
շխուցաղը հոգատարության, մեզ տալիս է՝  
սնվելով մեր ժողովորդի սրտի ու հոգու ան-  
ցամաքելի ակոմքներից։

Ահա այս գիտակցությամբ, մեր Ճեմարա-  
նի ամբողջ ուսանողության անունից շնոր-  
հավորում եմ Զերդ Ս. Օծությանը իր  
ծննդյան և գահակարության զույգ տարե-  
ղարձների առթիվ, խնդրելով, որ ընդունեք  
մեր երախտիքներով ծրարված սրտագին

շնորհակալությունները մեր նկատմամբ ցու-  
ցարերված հայրական սիրու և հոգատարու-  
թյան համար։

Ամեն օր մեր աշքի առաջ Զերդ Վեհակիա-  
ռության ծավալած գործումնեությունն ու անձ-  
նական օրինակները մեզ ավելի ևս ամ-  
րապնդում են մեր ուստի մեջ, մեզ մղում են  
անձնվիրաբար ծառայիլու այս սուրբ հաս-  
տառաթյան՝ ի փառս մեր ազգին և հոգա-  
խություն Զերդ։

Ուրեմն, մեզ մնում է շարունակել ընթա-  
նալ Զերդ հարթած լուսաշող ուղիով, մինչև  
վերջին շուացը մեր կյանքի, այս հաղարամ-  
յա, երկնարերձ Աստուծու տան մեջ։

Մաղթում ենք, որ Տերը ինքը վարձահա-  
տուց լինի՝ Զերդ Սրբությանը պարզելով եր-  
կար, երջանիկ ու բեղմնավոր կյանք, Զերդ  
սրտի և հոգու առավել պայծառությամբ ծա-  
ռայիլու մեր Առաքելական Ս. Եկեղեցուն  
և մեր հանճարաշատ ու ստեղծագործ հայ  
ժողովորդին։

Գ դասարանի ուսանող նուպար Պայանի  
բառերով և Բ լսարանի ուսանող ուրարակիո  
Խորեն ՄԵԼՍԱՆՆԱՋԱՅԵԼ երաժշտությամբ նո-  
րին Վեհակառության ձոնված մաղթերգի շատ  
հաջող և ծափահարված կատարումից հետո,  
ամբոխնին է մոտենում «Էջմիածին» ամսա-  
գի խմբագիր և Հոգևոր Ճեմարանի դասա-  
խոս Արքուն Հատիկյանը։

ԱՄՐՈՒԹԱԳԻՆ բայց միաժամանակ մի շատ  
զժվարին պարտականություն է ծանրանում  
ինձ վրա, — ասում է նա, — այս հանդիսավոր  
պահին, խոսելու մեր բոլորին սիրելի Վեհա-  
փառ Հայրապետի կյանքի և գործումնեության  
մասին։ Ու ես վախենում եմ, որ շկարողա-  
նամ ըստ արժանվույն և խղճի մտոք Զեր-  
ներկայացնել այդ կյանքը իր գրավիլ պար-  
զության, օրինակելի համեստության և սըր-  
տառուց վեհության մեջ, մի կյանք՝ որի վրա  
օրորոցից հակել են Ծրեշտակները և որին  
առաջնորդել է նախախնամության Աջը, ըն-  
տանեկան խոնարհ հարկից մինչեւ կուսա-  
վորչի Աթոռը։

Հորեւանական այս տոնական օրերին մեր  
հարգանքի և երախտագիտության առարկա է  
զանում հիսուն տարիների վրա բաշխված  
մի կյանք, որի 35 տարիները եղել են ճշշ-  
մարտապես հայ գրի և գրականության, հայ  
նոր սերնդի դաստիարակության, և վերջա-  
պես, ամբողջովին հայ ժողովորդի և Հայ Եկե-  
ղեցու բոլորանվեր ծառայության նվիրված,  
համատի և գործի կյանքի։

Ծնողաները միշտ տրախություն են բե-  
րում ընտանիքին և հարազատներին։

Ծնողաներ էլ կան, որոնց տրախությունը  
դուրս է զալիս ընտանեկան շրջանակից,  
օրհնություն և միտիթարություն դառնարու-  
հասարակության, Ազգին և Եկեղեցուն։

Ահա այսպիսի մի օրհնաբեր ծնունդ տեղի ունեցավ Թովմարեստում, 1908 թվականի սեպտեմբերի 20-ին, երբ ծնվեց ապագա Վեհափառ Հայրապետը:

Վեհափառի հայրը՝ Աքրահամ Պալճյանը, եղել է համեստ ու հավատավոր աշխատավոր, որն իր ընտանիքի հայր Հայրաթել է վարդար քրտինքով։ Ապագա Վեհափառ Հայրապետը իր հորից ժառանգել է աշխատանքի, սերը, նամուն ու զայրաթը, իսկ նրա մայրը՝ ուսուցչուհի Սիրանուշը, իր մայրական անխարդախ կաթի հետ իր որդոն է շամբել հավատի հուրը, հայրենասիրովթյան շոնչը և հայ մշակույթի սերը։

Վեհափառ Հայրապետը հայ մեծասքանչ լեզվի գաղտնիքը սկսել է ճանաչել ուսուցչուհի մորը ծննդերի առաջ, ապա հաճախել է հայկական, գերմանական, ուսմինական վարժարաններ, նրա ծնողները ու մի զոհողության առաջ կանգ շեն առել, գիշեր և ցերեկ ասեղ են ծեծել՝ իրենց միակ զավակին տալու համար բարձրագույն ուսում։ 1929 թվականին հազիվ վերջացրած միջնակարգը, ուսումնատենչ պատանին ուղարկ է մտնել կյանք՝ տնտեսական թև ու թիկունք լինելու համար իր ծնողներին։ Բայց ուսման սերը նրան տանում է գեպի համալսարան։ 1931 թվականին, հաջողությամբ հանձնելով ընդունելության ֆինությունները, մտնում է համալսարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետը՝ մասնագիտություն ընտրելով հոգեբանությունը, մանկավարժությունը և հասարակական գիտությունները։ Համալսարանը վճռական դեր է կատարում նրա մտավոր զարգացման, մտահորիզոնի ընդլայնման և հայացքների ձևավորման բնագավառում։

1936 թվականին, բազմակողմանիորեն զարգացած, կայտն և խոր գիտելիքների տեր, մտնում է կյանք՝ իր ժողովրդին ծառայելու եռանդով և ուսուով նույն տարիներին նա Թովմարեստում ծավալում է հրապարակագրական գործունեություն՝ հրատարակելով «Հերկա» ամսագիրը, աշխատելով նոր ու թարմ մտածումներով, ապրումներով ու գործունեությամբ տեղ գրավել հայ կյանքում։ Դա երիտասարդական այն տարին է, երբ նրա մաքրող մտասեեռումը դառնում է հայ մշակույթի, հայ հոգու, Ս. Էջմիածնի, Մայր Հայրենիքի շուրջը։ Այդ շրջանը Վեհափառ Հայրապետի կյանքի մեջ որոնումների շրջան է հանդիսանում։ Նա, ստեղծագործական երկունքից բռնված արվեստագետի նման, նոր ճանապարհներ է որոնում՝ իր ժողովրդին լավագույն ծառայելու համար։ Եթե նոր առ 1943 թվականին ուսուցիչը դառնում է վարդապետ, հոգեր ուսուցանող, ինչպես Մեսրոպը, երբ հրաժարվեց զինվորական իր փայլուն հա-

մազգեստից, և, պատմիլ բացատրությամբ՝ «աշխարհազրոս զբաղմոնք»-ներից և հագալվանականի կնուղը՝ բոլորանվեր ծառայելու իր ժողովուհին։ «Ոչ եթէ ոք անձամբ առնու զպատիւ [պաշտպան], այլ կոչեցեալն յԱստուծոյ»։

1943 թվին նա Աստուծու կանչով և իր ժողովորի ընտրությամբ, «զի պարտ է վկայութիւն բարի և յարտաքնոցն ունել», Աթենքում Տ. Կարապետ Մազլըմյան արքեպիսկոպոսից ձեռնադրվում է վարդապետ, և Սուլավայի պատմական Հաճկատար վանքում, աղոթքի, հսկման, ինքնամփոփման 40-օրյա շրջանից հետո, հոգով պայծառացած և աճած, իմաստությամբ պսակված և իր կոչման արժանավայել գիտակցությամբ գտնում է իր ժողովրդին ծառայելու հարազատ ճանապարհը։

1943—1955 թվերին Վազգեն վարդապետը, ապա եպիսկոպոս, ուսմինահայ թեմում ծավալում է առաջնորդական հովվական անազմով, բայց արդյունավետ գործունեություն, իրեն հատուկ լրջությամբ, համեստությամբ, հանդես ըերելով կազմակերպաշական ընդունակություն և վարչական շնորհ։

1955 թվականի սեպտեմբերին, գլամուր Աստուծու և ընտրութեամբ Ազգի, կոչվում է բազմելու կուսակը Գայուս Փառավոր։

«Զի ոչ եթէ որ զանձն իր ընծայեցուցանէ, նա է ընտրեալ, այլ զոր Տէրն ընծայեցուցանէ։ Որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, իր օծումից հետո ընդունելով Եկեղեցու ու ողջ Ազգի միահամուռ հավատարմությունն ու հպատակությունը, որպես աստվածարյալ Հայրապետ, բարձրանում է Ս. Լուսավորչի պատմական Աթոռի վրա, ոչ թե փառավորվելու, այլ այդ Աթոռը նոր փառքով ծածկելու։

Ապա հարգելի բանախոսը ծանրանում է Վեհափառ Հայրապետի հոգեկան նկարագրի հիմնական գծերի վրա, նրան ներկայացնելով հավասարապես իրու հավատի և գործի մարդ, խորապես հայրենասեր և լավատեսանձնավորություն։

Պր. Արթուր Հատիսյանի մեկ ժամ տևող բանախոսաթյունը լավում է ոփեռությամբ, որից հետո երգախոսմբ դաշն ու վեհ երգում է «Տէ՛ր, կեցո՞ Դու զհայս» մաղթերգորդ։ Ապա Ալարանի ուսանող Ռուբիկ Մկրաշյանը արտասանում է Եղիշե արքեպիսկոպոս Դուլյանի ծեռես եկուրք կրոնաշոնչ բանաստեղծությունը։ Բ լսարանի ուսանող բարեհնորդն Հակոբ սարկավագ Պողապալյանը ապրում երգում է ժեաչը (խոսք Եղիշե արքեպիսկոպոս Դուլյանի, երաժշտություն՝ Շահան Պերպերյանի)։ Սիլվա Կապուտիկյանի օՄեր քարերը գեղեցիկ բանաստեղծությունը արտասանում է հաշողությամբ Գ դասարանի ուսանող Կ. Սերայդարյանը և ապա իր ինքնագիր

քերթվածն է ընթերցում Գ դասարանի ուսանող Նուպար Պալյանը, նվիրված Վեհափառ Հայրապետին: «Աղրիկ կենաց» շարականի կատարումից հետո, խանդավառ ժափերի տակ, խոսք է առնում Հորելլար Վեհափառ Հայրապետը.

«Կիսորենինք, քե Մեզ հետ համաձայն եք երե բանենք, քե հիմա դժվար է խոսիլու այնան շերմ խոսիր լսելին հետո: Շնորհակալ ենք անկեղծորեն, բոլորին շնորհակալուրյուն:

Հանգեսր Մեզ ուրախացուց մանավանդ մեր սիրելի աշակերտներու ելույթներով, որոնք ամենաքանակին ենքերներ են Մեզ համար: Նկատելի է Հոգևոր Շնորհակալի ուսանողուրյան բայլ առ բայլ հառաջդիմուրյունը, պայծառակերպումը: Շնորհը, պայծառուրյունը, լույսը կերևա անոնց աշխատանքին մեջ, անոնց երեսներուն վրա, անոնց շարժումներուն մեջ, և շափազանցուրյուն բռու չրվի, երե բանե՞ իրենց ստեղծագործուրյուններուն մեջ նույնիսկ. օրինակ՝ Խորեն Մելիսանաշյանի գրած երածշառուրյունը: Խոյնեն է պարզաբ նաև մյուս ելույթը ունեցողներուն: Երե մենք այսօր ականատես ենք այսպիսի տաղանդի ակնեայտ կայծերու, ուրեմն վատանորեն կարող ենք բանել, որ Հոգևոր Շնորհական կցոնվի իր նշմարիտ նանապարենին վրա: Երե ուսանողները Մեզմեն պատգամ, նորդոր կապանեն այս բռպեհն, Մեր հայրական խոսքը պիտի ըլլար միայն՝ «զարունակել սկսված աշխատանքը»:

Աստված շնորհներ կրաշխիս բոլորին անխտիր, բայց ետ կառնեն ծովյերու ձեռքնեն: Լենարդոն դա Վիճշին, իտալական վերածնունդի այդ բազմանանեար արվեստագետը կվկայէ՝ «Հանճարը աշխատանք է»:

Դուք կոչված եք, սիրենի՝ աշակերտներ, ըլլալու Մեր աշխատակիցները, ըլլալու Ս. Էջմանձին սպասավորները: Դուք այդ բանի մեջ տեսեք ոչ միայն ձեր կյանքի հաջողուրյունը, այլ նաև պատիվը և փառքը: Անեցե՞՞ն ու ծաղկեցե՞՞ն, որպեսզի երշանիկ օր մը, ձեր հայացքը դարձնելով Մեր Ազգին, Մեր Եկեղեցին, նահատակ բանաստեղծին հետ կարենաք բան. «Մենք, զավակներդ օգոստափառ, պիտի կերտենք նո՞ր աշշալույս»:

Թող Աստուծու օրինուրյունը անպակաս ըլլա ձեր բոլորին վրայենք:

Վեհափառ Հայրապետի ծննդյան հիսնամյակի և գահակալության երրորդ տարեդարձի Հորելլանական հանդիսություններին նվիրված այս հույժ գեղեցիկ և դաստիարակիչ գրական գեղարվեստական երեկություն վերջացավ խմբովին երգլած Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիշ»-ով:

Հարգարժան պատգամավորներն ու հյուրերը հոգեկան բարձր տրամադրությամբ ու հա-

րուատ ապրումներով մեկնեցին Հոգևոր Ճեմարանից, իսկ ուսանողները... Այնքան լեցուն է նրանց հոգին այսօր, այնքան խորն են նրանց հոգումները այս գիշեր: Տե՛ր Աստված, թող շնամթարվեն Քեզ ընծայաբերված այս մատղաշ հոգիների սրբազն հոգւգերն ու տեսիլները...»

Վեհափառ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՌԱՄԵՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑՅԱԼ. — Ճիշգաբերի օրը, հոկտեմբերի 16-ին, առավոտյան ժամը 10-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսարահում բոլոր պատգամավորների, Մայր Աթոռի միաբանության, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմի և Մայր Աթոռի պաշտոնական և այլ պաշտոնական անձնափորությունների ներկայության Վեհափառ Հայրապետը զեկուցեց իր եռամյա գործունեության մասին: Վեհափառ Հայրապետը հանդիսավոր կազմության և ապագա ծրագրերի և շինարարական հեռանկարների մասին:

Նորին Ս. Օծովյունը եկեղեցական թափորով Վեհարանից առաջնորդվեց Հոգևոր Ճեմարան և ընդունվեց բոլորի սրտագին ծափողույններով:

Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ գերաշնորհ Տ. Մահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսիանը, բաց անելով ժողովը, հրավիրեց Վեհափառ Հայրապետին զեկուցելու իր եռամյա գործունեության մասին: Վեհափառ Հայրապետը հանդիսաւոր տոնով, խանդավառ շեշտով կարդաց իր զեկուցումը, որը լսվեց խորին գորունակությամբ, և երախտագիտությամբ, համախըզբելով խանդավառ ծափերով:

Զեկուցման վերջավորության, գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Միրոնյանը, հանդուն բոլոր ներկաների, շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետի եռամյա գործունեության շուրջ, առաջարկեց հետևյալ բանաձևը.

«Բոլոր ներկաները, խորունկ գոհունակությամբ և շնորհակալությամբ լսելով նորին Ս. Օծուրյան զեկուցումը, իրենց որդիական երախտագիտուրյունը կիայտնեն Վեհափառ Հայրապետին, Անոր եռամյա բեղմնավոր և արդյունավետ գործունեության համար»:

Մամբրե սրբազնի առաջարկը բոլոր ներկաների կողմից ընդունվեց հոտնկայս, ուրախ ծափահարություններով և սրտի սնկեղծ գոհունակությամբ:

ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍԵՂԱՆ Ի ՊԱՏԻԿ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ. — Ժամը 3-ին, Հոգևոր Ճեմարանում, Վեհափառ Հայրապետը, ի պատիվ պատգամավորներին, տվեց ճաշկերություն Սեղանի զարդն էր հայկական ավանդական հարիսան:

Վեհափառ Հայրապետը, սեղանը օրհնեց  
ու գ հետո, բացատրեց Հարիսայի ծագման  
պատմոթյունը.

«Ս. Լուսավորի օրվ, այս նոյն պատմական սուրբ տեղյաց մեջ, մեծանանդես տոն էր: Ներկա էին բազմահազար հավատացյալներ՝ նոգեռական ու շինական, ինչպես այսօր: Ս. Լուսավորի կմտածե բոլորը կերպելու մասին: Ու կմտաբերե, որ Մայր Արքոփի մառանները լինե են ցուենով: Կերամայի բանալ մառանի դռները և ցուենը վաճի աշխատավորներուն ցույց տալով կրսե: «Հարէ՛ գաս»: Անա այս «հարէ՛ գաս» բառերեն հառաջ կուգա մեր պատմական հարիսան:

Սիրելի սեղանակիցներ, բույլ տվեմ այս առիրով խոսովանուրյուն մը ընել: Այսօրվան այս ճաշը նախատեսված չէր, և հետեւարար պատրաստված չէինք: Երեկ երեկոյան է, որ որշեցինք և ահա այս շատ կարե ժամանակամիջոցին մեջ Մայր Արքոր, միմիայն իր ուժերով, կրցավ քանի մը ժամվան մեջ 70—80 հոգիի համար այս սեղանը կազմակերպել, որմե կատրինինք, թե դժգոհ չեմ: Այս ցույց կուտա, թե Ս. էջմիածնի մառանները լեցուն են և մատովակները՝ ժիր: Արդ, սիրելի՛ Մեր, նաշակեց՛ իսաղապորյամբ, անո՞ւ ըլլա:

Մայր Աթոռի բարիքներով ժանրաբեռնված սեղանների շուրջ մի անգամ ևս ստեղծվեց հայկական շերմ ու խանդավառ մթնորորտ:

Խոսք առին Տ. Մամրիք, Տ. Սերովիք, Տ. Հայկագուն, Տ. Զգոն, Տ. Վարդան սրբազնները, արժանապատիկ Տ. Վահան ավագ քահանա Գրիգորյանը և արժանապատիկ Տ. Եղիկիկ ավագ քահանա Վարդանյանը, պարոնյա Նուպար Կյուպիթներյանը, տիկին Մարի Կյուպիթներյանը, Մարգիս Քյուրքնյանը, մեթր Հրաշ Սեղորակյանը, իրվանդ Հրտահյանը, Գրիգոր Շիլթյանը, Անդրանիկ Մառովյանը,

Սեղուակ Քարյանը, Եղվարդ Ութումյանը և շատ ուրիշներ:

Հարիսայի սեղանը փակվեց Վեհափառ Հայրապետի Տերութական աղոթքով:

Երեկոյան պատգամավորներն ու Հյուրերը ներկա եղան Ալեքսանդր Սպենդիարյանի ամվան օպերայի և բալետի պետական թատրոնում «Արծվաբերդ» օպերային:

Հոկտեմբերի 17-ին, ուրբաթ, առավտայն ժամը 11-ին, Վեհարանի դահլիճում, տեղի ունեցավ եպիսկոպոսական խորհրդակցական ժողովի Անսուր, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

Նույն օրը պատգամավորները, առանձին խմբերի բաժանված, եղան Մայր Աթոռում և ժանոթացան Մայր Տաճարի հեղեցա-հնագիտական թանգարանին, Հոգմոր Ճեմարանին, տեղադրման ընթացքի մեջ գտնվող տպարանին և շինարարական աշխատանքներին: Այցելեցին նաև Ս. Հոփիսիմեկի և Ս. Գայանեի վանքերը:

Երեկոյան պատգամավորներն ու Հյուրերը եղան «Երտի արաւո» թատերական ներկայացմանը Սովորույթյանի անվան Պետական թատրոնում:

Հոկտեմբերի 18-ին, շաբաթ, առավտայն ժամը 11-ին, բալոր պատգամավորները, Հյուրերն ու ուսմուտավորները Հոգմոր Ճեմարանի դահլիճում լսեցին ճարտարապետ Միքայել Մազմանյանի բովանդակալից գեկուցուցմը Մայր Աթոռի կատարված, կատարվող և կատարվելիք շինարարական վիթխարի աշխատանքների մասին:

Ճարտարապետ Մ. Մազմանյանի գեկուցուցմը լսվեց մեծ գոհունակությամբ և հետաքրքրությամբ:

Նույն օրը, ժամը 3-ին, տեղի ունեցավ եպիսկոպոսական խորհրդակցական ժողովի Բնիսուր:

Երեկոյան ժամերգությունից հետո բոլորը ներկա եղան համբերդի:

